UNCLASSIFIED

USAID FROM THE AMERICAN PEOPLE | ARMENIA

Glen Garanich for Reuters

ԵՐԿՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ (ԵԶՀՌ)

24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2020թ. – 24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2025թ.

Ցանկ

Հապավումներ 1
I. Ամփոփագիր 3
II. Երկրի համատեքստը 8
Թավշյա հեղափոխությունը 8
COVID-19-ի ազդեցությունը 9
ԱՄՆ արտաքին քաղաքականության գերակայությունները 10
J2SR ճանապարհային քարտեզի վերլուծություն. Հանձնառություն 11
J2SR ճանապարհային քարտեզ. Կարողություններ 12
J2SR ճանապարհային քարտեզի վերլուծություն. ամբողջական պատկերը 13
Տարածաշրջանային դերակատարները 15
17
III. Ռազմավարական մոտեցում 17
Ճանապարհ դեպի ինքնապահովում 17
Տարբերվող մոտեցում 19
Հարաբերությունների վերաձևակերպում. Դեպի ռազմավարական անցում 20
Հարաբերությունների վերաիմաստավորում. Դիմակայունություն 21
Ներառական զարգացում 23
Կլիմայի փոփոխությունը և կենսաբազմազանությունը Հայաստանում 23
Ուղենիշներ 25
IV. Արդյունքների իրականացման համակարգ 26
նպատակի մասին հայտարարում եվ նկարագիր 26
Զարգացման նպատակ 1. Ժողովրդավարական անցման առաջխաղացում 27
Զարգացման նպատակ 2. Տնտեսական կայունության ամրապնդում 36
V. Մշտադիտարկում, գնահատում և ուսուցում 47
VI. Հավելված. Ճանապարհ դեպի ինքնապահովում. Ճանապարհային քարտեզ 51

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԳԱ	Գնումներ և օժանդակություն
ՀԱՀ	Հրահանգների ավտոմատացված համակարգ
ԵԶՀՌ	Երկրի զարգացման համագործակցության ռազմավարություն
ՀՈՒՀ	Համագործակցություն, ուսուցում և հարմարեցում
ՀԿԱԱ	Հակազդում Կրեմլի անբարենպաստ ազդեցությանը
COVID-19	Կորոնավիրուսային հիվանդություն 2019
ԿՌԿ	Կլիմայի ռիսկի կառավարում
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ՄԹՊ	Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքար
ԶՖԿ	Զարգացման ֆինանսական կորպորացիա
ԺԿ	Ժողովրդավարություն և կառավարում
ԶՆ	Զարգացման նպատակ
ԵԵ	Եվրոպա և Եվրասիա
ՏԱ	Տնտեսական աճ
ՕՈՒՆ	Օտարերկրյա ուղղակի ներդրումներ
ԻՖ	Ինքնապահովման ֆինանսավորում
G2G	Կառավարությունից կառավարությանը
ՋԳ	Ջերմոցային գազ
GIS/ԱՏՀ	Աշխարհագրական տեղեկատվական համակարգ
ՀՀԿԱՌ	ՀՀ Կառավարություն
ԵԻՌ	Երկրի ինտեգրված ռազմավարություն
ՏՀՏ	Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիա
ՆԱԴ	Ներառական աճի դիագնոստիկա
ԹՊԻՀ	Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության գրասենյակ
ՄԱ	Միջանկյալ արդյունք
ՄՀԻ	Միջազգային հանրապետական ինստիտուտ
J2SR	Ճանապարհ դեպի ինքնապահովում
ՀՏՌ	Համատեղ տարածաշրջանային ռազմավարություն
ԼԳԲՏԻ	Լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր, ինտերսեքս)
ՓՀ	Փոխըմբռնման հուշագիր
NSS	Ազգային անվտանգության ռազմավարություն
ԱՆԳ	Անցումային նախաձեռնությունների գրասենյակ
ԿԿՊ	Կատարողականի կառավարման պլան
ՊՄՀ	Պետական-մասնավոր համագործակցություն

ՄՀՄ	Մասնավոր հատվածի միջոցառում
Ենթա-ՄԱ	Ենթամիջանկյալ արդյունք
ՀՎ	Հարաբերությունների վերահիմաստավորում
ԱՄՆ ՄԶԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային Զարգացման Գործակալություն
ԱՄՆԿ	ԱՄՆ Կառավարություն
V-Dem	Ժողովրդավարության բազմազանություն

I. ԱՄՓՈՓԱԳԻՐ

ԵԶՀՌ նպատակը

ԱՄՆ ՄԶԳ-ի 2020-2025թթ. Երկրի զարգացման համագործակցության ռազմավարության (ԵԶՀՌ) նպատակը Հայաստանի կարողությունների բարելավումն է և ինքնապահովմանն ուղղված նրա հանձնառությունների հետագա զարգացումը, որպեսզի երկիրն օգտվի ավելի ընդգրկուն, ժողովրդավար և տնտեսապես կայուն գործընկեր դառնալու ռազմավարական անցման հնարավորությունից: Այս նպատակի իրագործման նպատակով ԱՄՆ ՄԶԳ-ն կձգտի խթանել 2018 թ. խաղաղ «Թավշյա հեղափոխության» նախաձեռնած ժողովրդավարական անցումը և բարելավել Հայաստանի տնտեսական անվտանգությունը: Սա թույլ կտա երկրին հաջողության հասնել որպես անվտանգ, բարեկեցիկ և ժողովրդավար երկիր, որը խաղաղ հարաբերությունների մեջ է հարևանների հետ և ավելի սերտորեն է ինտեգրված Եվրոատլանտյան հանրության մեջ: [1]

Աշխատելով բարեփոխումների նկատմամբ հաստատուն հանձնառություն ցուցաբերած և քաղաքացիների լայն աջակցությունը վայելող կառավարության հետ՝ ԱՄՆ ՄԶԳ-ն բացառիկ հնարավորություն ունի աջակցելու Հայաստանին՝ վերջինիս բարեփոխումների հավակնոտ օրակարգն իրականացնելու գործում: ԱՄՆ կառավարության (ԱՄՆԿ) օժանդակության մեծ մասը տրամադրող ԱՄՆ ՄԶԳ-ն աննախադեպ հնարավորություն ունի օգնելու ԱՄՆ արտաքին քաղաքականության երկար սպասված նպատակների իրականացմանը՝ Հայաստանում տնտեսական և ժողովրդավարական զարգացումը խթանելու միջոցով: Ներառական տնտեսական աճի և հաշվետվողական կառավարման առնչությամբ քաղաքացիների մեծ ակնկալիքները արդարացնելու՝ Հայաստանի կառավարության կարողությամբ մեծ մասամբ կորոշվի, թե որքան ժամանակ հասանելի կլինի բարեփոխումների այս հնարավորությունը:

COVID-19 համավարակը

Սույն փաստաթուղթը գրելու պահին 2019թ. կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) համաշխարհային համավարակը շարունակում է ամբողջ աշխարհում համայնքներ և տնտեսություններ կազմաքանդել: Ներկայումս Հայաստանում դեպքերի հաճախականության ցուցանիշը աշխարհում ամենաբարձրներից մեկն է՝ մեկ շնչի հաշվով, չնայած COVID-19 դեպքերի բացարձակ թիվը այժմ նվազման միտում ունի: Ընթացիկ համավարակը մեծ ազդեցություն է ունեցել Հայաստանի դրական տնտեսական աճի հետագծի վրա և վտանգ է ներկայացնում կառավարության բարեփոխումների օրակարգի իրականացման համար: Կան նաև ապացույցներ, որ ճգնաժամի առկայությունը շահագործվում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին անբարենպաստ ազդեցության նպատակով: ԱՄՆԿ- ն կիրառել է լրացուցիչ ռեսուրսներ՝ COVID-19-ին Հայաստանի Կառավարության (ՀՀԿԱՌ) արձագանքմանը

[1] Երկրի ինտեգրված ռազմավարություն Հայաստան՝ հաստատված 2018թ. օգոստոսի 28-ին:

աջակցելու համար, իսկ ԱՄՆ ՄԶԳ-ն հարմարեցնում է առկա ծրագրերը՝ ճգնաժամի ազդեցությանը դիմագրավելու նպատակով: Այս ջանքերի հիմքում ընկած է համավարակից առաջ ԱՄՆ կառավարության կողմից հայաստանյան հաստատություններին տրամադրված նշանակալի աջակցության ժառանգությունը, որն ամրապնդեց COVID-19-ին հակազդելու՝ ՀՀ կառավարության կարողությունը: COVID-19-ի երկարաժամկետ հետևանքները, ամենայն հավանականությամբ, զգալի կլինեն և կարող են շարունակվել նոր ռազմավարության գործողության ողջ ընթացքում:

Հայաստանի ճանապարհը դեպի ինքնապահովում

2018 թվականի հեղափոխության արդյունքում գրանցված ժողովրդավարական ձեռքբերումները դեռևս փխրուն են, և հաջորդ հնգամյակը կարևոր նշանակություն ունի Հայաստանի ինքնապահովման երկարաժամկետ նպատակների իրականացման տեսանկյունից: Ըստ ցածր և միջին եկամուտ ունեցող երկրների չափանիշների Հայաստանը զգալի առաջընթաց է գրանցում դեպի ինքնապահովում իր ճանապարհին (J2SR): J2SR տվյալները ցույց են տալիս Հայաստանի զարգացման առաջընթացը ազատական ժողովրդավարության, քաղաքացիական հասարակության և լրատվամիջոցների արդյունավետության, ինչպես նաև տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) որդեգրման հատուկ միջոցառումների ուղղությամբ: 2018 թվականի քաղաքական անցումը ավելացրեց կառավարության բարեփոխումների միտված հանձնառությունը, իսկ ԱՄՆ 28-ամյա օժանդակության ժառանգությունը նպաստեց այս առաջընթացին: Դեռևս ինքնապահովման զգալի բացեր կան, որտեղ առավել սուր է կարողությունների պակասը: 2019 թվականի սեպտեմբերին ՀՀ-ում ԱՄՆ դեսպանությունը մշակեց «Դրական օրակարգի» մոտեցումը՝ կառավարության առաջնորդներին ներգրավելու և օժանդակ ռեսուրսները համապատասխանեցնելու ռազմավարական մակարդակի նախագծերին, որոնք նպաստում են Հայաստանի բարեփոխումների օրակարգին և սատարում այն: Այս նոր ԵՋՀՌ-ով ԱՄՆ ՄԶԳ-ն կշարունակի խթանել Երկրի ինտեգրված ռազմավարության նպատակները՝ անդրադառնալով J2SR- ի նշանակալի բացերին և աջակցելով կառավարության բարեփոխումների առաջնահերթություններին, այդ թվում՝ դատական բարեփոխումներին, կառավարության արդյունավետության բարելավմանը, թիրախային բարձրարդյունավետ ոլորտներում արտահանման կատարելագործմանը, և Հայաստանի տնտեսական գենդերային խզվածքի վերացմանն ուղղված համակցված ջանքերին:

ԱՄՆ ՄԶԳ ռազմավարական տեսլականը և հարակից ընտրված ծրագրերը սերտորեն համապատասխանեցված են ՀՀ Կառավարության կողմից սահմանված զարգացման առաջնահերթություններին՝ 2050 թվականի Փոխակերպման ազգային ռազմավարության և հարակից ոլորտային ռազմավարական ծրագրերի համաձայն: ՀՀ Կառավարությունը որպես երեք հիմնական առաջնահերթություն է սահմանել հակակոռուպցիոն ոլորտը, դատական բարեփոխումները և տնտեսական աճը, որոնք բոլորն էլ կարևորվում են ԱՄՆ ՄԶԳ ԵՋՌԾ արդյունքների իրականացման համակարգում:

Ռազմավարական ընտրություններ

ԱՄՆ ՄԶԳ մոտեցումը խթանում է ռազմավարական անցումը՝ կիրառելով ԱՄՆ-Հայաստան դրական զարգացումները և դիվանագիտական հարաբերությունները առաջ մղելու հնարավորությունները: Ներկայիս հայաստանյան համատեքստում «ռազմավարական անցումը» կկենտրոնանա ԱՄՆ ՄԶԳ-ի՝ կառավարության հետ հարաբերությունների վերանայման և խորացման այս ջանքերի շուրջ, որպեսզի վերջինս էլ ավելի մեծ դերակատարում ստանձնի իր զարգացման առաջընթացը առաջնորդելու գործում: Ներկայիս ԵԶՀՌ-ի ներքո ռազմավարական անցումը չի ենթադրում ջանքերի, ռեսուրսների կամ անձնակազմի որևէ կրճատում: Ռազմավարության ժամանակահատվածի ընթացքում ԱՄՆ ՄԶԳ-ն ձգտում է ընդլայնել և պահպանել ժողովրդավարությունը, իրավունքները և կառավարման գործունեությունը, ձևավորել բարեփոխումներ իրականացնելու ազգային վարչական կարողություններ, ամրապնդել օրենքի գերիշխանությունը և կանխարգելել կոռուպցիան: Նախորդ ԵԶՀՌ-ի ներքո հակամրցակցային գործարար գործելակերպերով կաշկանդված միջավայրում աշխատանքից Առաքելությունն անցնելու է առկա քաղաքական կամքի կիրառմանը՝ ուղղված այդ գործելակերպերի լիակատար վերացմանը և թիրախային բարձր ազդեցության ոլորտներում Հայաստանի տնտեսական կառավարման ու կարողությունների բարելավմանը: Դրանով ԱՄՆ ՄԶԳ-ն շեշտը դնելու է մասնավոր հատվածի կողմից ղեկավարվող շուկայական մոտեցումների վրա՝ ուղղված մրցունակության նորարարության և բնական ռեսուրսների կայուն կառավարման խթանմանը: ԱՄՆ ՄԶԳ-ն նաև ավելի սերտորեն կհամագործակցի մասնավոր հատվածի հետ՝ տնտեսական կայունությունը և անվտանգությունը խթանելու նպատակով:

ԱՄՆ Կառավարության արտաքին քաղաքականության առաջնահերթությունները

Սույն ռազմավարությունն արտացոլում է ԱՄՆ ազգային անվտանգության ռազմավարության, Պետդեպարտամենտի և ԱՄՆ ՄԶԳ համատեղ ռազմավարական ծրագրի և Պետդեպարտամենտի Եվրոպական և եվրասիական հարցերի բյուրոյի ու ԱՄՆ ՄԶԳ Եվրոպայի և Եվրասիայի բյուրոյի կողմից մշակված համատեղ տարածաշրջանային ռազմավարության առաջնահերթությունները: ԱՄՆ ՄԶԳ-ի ռազմավարական մոտեցումը արմատացած է նաև Գործակալության «Ճանապարհ դեպի ինքնապահովում» համակարգում: Հայաստանը Պետդեպարտամենտի Կրոնական ազատության միջազգային զեկույցում չի նշվում որպես մտահոգություն առաջացնող երկիր, քանի որ այս պահին կրոնական ազատության համար ռիսկերը կամ սպառնալիքները նվազագույն են:

2020 թվականի հունիսին Հայաստանի վարկանիշը Պետդեպարտամենտի 2020թ. *Մարդկանց թրաֆիքինգի մասին* զեկույցում նվազել է: Չնայած զեկույցում նշվում էր, որ ՀՀ կառավարությունը «զգալի ջանքեր է գործադրում» թրաֆիքինգի վերացման նվազագույն չափանիշներին համապատասխանելու համար, նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատ «ջանքերի ակնհայտ աճ» չի գրանցվել: ՀՀ Կառավարությունը պետք է որոշակի քայլեր ձեռնարկի լուծելու համար այն խնդիրները, որոնք հանգեցրել են այս վարկանիշի իջեցմանը, այլապես այն կազդի ԱՄՆ-ի կողմից Հայաստանին տրամադրվող օգնության վրա: Ռազմավարության իրականացման ժամանակաշրջանի սկզբում կիրականացվի լրացուցիչ գնահատում՝ ավելի լավ հասկանալու համար, թե որն է հետագա ծրագրերում մարդկանց

թրաֆիքինգի դեմ պայքարի (CTIP) նկատառումները ներառելու և ակտիվացնելու՝ ԱՄՆ Կառավարության և ԱՄՆ ՄԶԳ-ի համար լավագույն եղանակը :

Նշում. Տվյալ ԵԶՀՌ– ը հաստատվել է նախքան Հայաստանի և Ադրբեջանի միջև 2020 թ. Սեպտեմբերի 27-ին Լեռնային Ղարաբաղի հակամարտության սրումը: Այս սրումը կարող է լուրջ հետևանքներ ունենալ ռազմավարության մեջ նշված զարգացման վերջնարդյունքների վրա: ԱՄՆ ՄԶԳ / Հայաստանը կշարունակի վերահսկել դրա հնարավոր ազդեցությունը և անհրաժեշտության դեպքում առաքելությունը կվերանայի ռազմավարական մոտեցումը: Առաքելությունը կիրականացնի Ծրագրերի քննարկումներ և (կամ) ԵԶՀՌ ընթացիկ գնահատումներ, ինչպես նաև Գործակալության կողմից այլ ուսումնասիրություններ՝ անհրաժեշտության դեպքում համապատասխան ճշգրտումներ կատարելու նպատակով:

Արդյունքների իրականացման համակարգի գծապատկերը

ՆՊԱՏԱԿԸ. Հայաստանը օգտվում է ավելի ներառական, ժողովրդավար և տնտեսապես դիմակայուն գործընկեր դառնալու հնարավորությունից

ՁՆ 1. Ժողովրդավարական անցման խթանում

ՄԱ 1.1. Արդյունավետ և հաշվետվողական կառավարման ինստիտուցիոնալացում

1.1.1. Օրենքի գերիշխանության ամրապնդում
1.1.2. Քաղաքական ներկայացուցչության և մրցակցության ամրապնդում
1.1.3. Թիրախային պոխակերպումային բարեփոխումների կարողությունների և հանձնառության ամրապնդում

ՄԱ 1.2. Քաղաքացիների ներգրավման ավելացում հանուն ժողովրդավարական հասարակության

1.2.1. Քաղաքացիական և քաղաքական մասնակցության ավելացում
1.2.2. Քաղաքացիական հասարակության կայունության բարելավում
1.2.3. ՁԼՄ-ների բարեվարքության բարելավում
1.2.4. Կանանց, երեխաների և խոցելի խմբերի զորձելու և բարձրաձայնելու իրավունքների և հնարավորությունների ընդլայնում

ՁՆ 2. Տնտեսական անվտանգության բարելավում

ՄԱ 2.1. Տնտեսական կառավարման ամրապնդում

2.1.1. Պետական հատվածի տնտեսական առաջատարության պաշտոնականացում
2.1.2. Համապատասխան միջավայրի բարելավում մասավոր հատվածի աճի համար
2.1.3. Արդյունավետ ներդրումների համար կապիտալի հասանելիության ապահովում

ՄԱ 2.2. Թիրախային հատվածների մրցունակության բարելավում

2.1. Տարատեսակ շուկաների հասանելիության բարելավում
2.2.2. Արտահանման կատարելագործման ավելացում
2.2.3. Շուկայի պահանջարկը բավարարելու մարդկային կապիտալի կարողությունների բարելավում

ՄԱ 2.3. Բնական ռեսուրսների կայուն կառավարման բարելավում
2.3.1. Էներգետիկ անվտանգության բարելավում
2.3.2. Ջրային ռեսուրսների հասանելիության և կառավարման բարելավում

ԽԱՉՎՈՂ ԹԵՄԱՆԵՐ. Դիմակայունության բարձրացում խաղաղության կառուցման, չարամիտ ազդեցության հակազդումը ուժեղացնելու և աղետներին արձագանքելու բարելավման միջոցով

II. ԵՐԿՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

ԹԱՎՇՅԱ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

2018-ի թավշյա հեղափոխությունը վերափոխիչ էր Հայաստանի համար: Հայ ժողովրդի երկար սպասվածհույսերն ու ձգտումները դեպի հետխորհրդային հանրապետություն, որը բնութագրվում է ինքնորոշման, հաշվետվողական կառավարման և տնտեսական հնարավորությունների առկայությամբ, խարխլվեցին համատարած կոռուպցիայի պատճառով, ինչը ժամանակի ընթացքում վերածվեց ունայնության և մերժման շոշափելի զգացողության:[2] Սակայն փոփոխության ուժեղ թաքնված պահանջը, անհատական գործելու և բարձրաձայնելու հարավորության և իրավունքի նկատմամբ հաստատուն հավատը և մտահոգ քաղաքացիների սոցիալական շարժման հավաքական ուժի արթնացումը կփոխեին հայաստանյան պատմության ընթացքը: Ամբողջ աշխարհի աչքի առջև Հանրապետական կուսակցության կողմից ղեկավարվող քաղաքականությունը մերժող համազգային փողոցային բողոքները, ի վերջո, կանխեցին Սերժ Սարգսյանին բարձր քաղաքական պաշտոնում երրորդ անընդմեջ ժամկետը: Դրանից բխող քաղաքական անցումը ասպարեզ բերեց առաջնորդների նոր սերունդ, որոնք հավատարիմ էին ժողովրդավարական կառավարմանը, հաշվետվողականության բարեփոխումներին և տնտեսական հեղափոխությանը՝ կենսունակ, ներառական և կայուն տնտեսություն կառուցելու աշխատանքը սկսելու համար: 2018 թ.-ի դեկտեմբերին տեղի ունեցան ազատ և արդար խորհրդարանական ընտրություններ, որտեղ ջախջախիչ հաղթանակ տարան Նիկոլ Փաշինյանը և «Իմ քայլը» դաշինքը: Սա շեշտակի ջախջախում էր նախկին իշխող կուսակցության համար, որը չկարողացավ պահպանել իր տեղերը նոր խորհրդարանում:

2019թ.-ի սկզբին Հայաստանի նոր կառավարությունը հայտնվեց դժվարին իրավիճակում՝ փողոցային բողոքներից հետո ստանձնելով պետության կառավարման ահռելի պատասխանատվությունը, ինչպես ձևակերպելով, այնպես էլ իրականացնելով հայ ժողովրդի մեծ ակնկալիքների արդարացմանն ուղղված բարեփոխումների քաղաքականությունը: Այս ակնկալիքները ներառում էին շոշափելի և ժամանակին տնտեսական բարելավման կոչ, նախկին կառավարության կողմից կոռուպցիայի և

<< Կառավարության զարգացման առաջնահերթությունները

1. Խթանել հակակոռուպցիոն գործունեությունը և օրենքի գերիշխանությունը
2. Բարելավել բիզնեսի համար նպաստավոր միջավայրը
3. Իրականացնել Պետական կառավարման բարեփոխումներ և տեղական ինքնակառավարման մարմիններին լիազորություններ տալ
4. Նպաստել ներառական զարգացմանը կրթության և սոցիալական բարեփոխումների միջոցով
5. Բարելավել քաղաքական գործընթացները և քաղաքացիների ներգրավվածությունը
6. Բարձրացնել էներգետիկ անվտանգությունը և էկոհամակարգերի կայուն կառավարումը
7. Նպաստել բարձր տեխնոլոգիաների, գյուղատնտեսության և զբոսաշրջության ոլորտի զարգացմանը

[2] Տե՛ս ԱՄՆ ՄԶԳ/Հայաստանի 2013-2020թթ Երկրի զարգացման համագործակցության ռազմավարությունը, որտեղ նշված է. «Հիասթափված լինելով հարստության աճող անհամապատասխանություններից և մարգինալացված լինելով կենտրոնացված և անթափանց քաղաքական համակարգից՝ քաղաքացիները վստահության շատ ցածր մակարդակ ունեն պետական ինստիտուտների նկատմամբ: Ավելի իմաստալից քաղաքական ներգրավվածության հնարավորությունների բացակայության պայմաններում քաղաքացիական ապատիան աճում է, և քաղաքացիական ներգրավվածությունը թույլ է»:

իշխանության այլ չարաշահումների համար պատասխանատվություն և երկրի զարգացման համար նոր տեսլական և ուղղություն մշակելու կոչ: 2019 թ.-ի ընթացքում կառավարությունը հաստատուն և գիտակցված առաջընթաց է արձանագրել առաջնահերթությունների սահմանման ուղղությամբ՝ ռազմավարական պլանավորման փաստաթղթերի միջոցով, ներառյալ հավակնոտ 30-ամյա վերափոխման ռազմավարությունը և 26 ոլորտային ռազմավարությունները: ԱՄՆ ՄԶԳ-ն աջակցել է այս ոլորտային ռազմավարություններից շատերի մշակմանը և դրանց հետ համապատասխանեցրել է սույն ԵԶՀՌ-ի ռազմավարական տեսլականը և հարակից ծրագրային ընտրությունները:

COVID-19-Ի ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

2020 թվականի գարնանը բարեփոխումներին ուղղված ՀՀ կառավարության ջանքերը խափանվեցին COVID-19 համավարակի պատճառով: Գրելու պահին Հայաստանում դեպքերի հաճախականության ցուցանիշը մեկ շնչի հաշվով ամենաբարձրներից մեկն է[3], ինչի պատճառով գերծանրաբեռնված են երկրի լաբորատոր և հիվանդանոցային կարողությունները: Հաշվի առնելով Հայաստանում սիրտ-անոթային հիվանդությունների բարձր մակարդակը, այլ ոչ վարակիչ հիվանդությունների բարձր մակարդակը, ծխելու տարածվածությունը[4] և համակեցության բարձր խտությունը համատեղ բնակվող բազմասերունդ ընտանիքներում՝ վարակի համայնքային փոխանցումը շարունակում է մտահոգել: Բացի այդ, COVID-19-ի վերաբերյալ լայնորեն տարածված ապատեղեկատվության և դավադրության տեսությունների տարածումը, ինչպես նաև գիտության նկատմամբ հասարակության վստահության ցածր մակարդակը, կարող են հանգեցնել Հայաստանում վարակի փոխանցման ավելի բարձր տեմպերին: .[5]

Ինչպես ԱՄՆ-ում, այնպես էլ Եվրոպայում, COVID-19 համաճարակը բավական մեծ ազդեցություն է ունեցել Հայաստանի տնտեսական աճի հեռանկարների վրա՝ համաշխարհային մատակարարման շղթայի խափանումների, արտահանման, այդ թվում առաջնային ապրանքների և ուղևորությունների և զբոսաշրջության ոլորտում մուտքերի կտրուկ անկման, սպառման կրճատման, կառավարության եկամուտների հեռանկարների նվազման և աշխատաշուկայի խաթարման պատճառով: Սա էլ ավելի է սրվում Ռուսաստանում տնտեսական անկման հետևանքով, որը Հայաստանի ամենամեծ արտահանման շուկան է հանդիսանում, ստացվող տրանսֆերտների ամենաէական աղբյուրը և Հայաստանից արտագնա աշխատանքի մեկնողների զգալի մասի առաջնային հանգրվանը:

---

[3] WHO Health Emergency Dashboard WHO (COVID-19) Homepage, July 22, 2020.

[4] Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալներով ՝ հայ տղամարդկանց ավելի քան 50% -ը ծխում է: Աղբյուրը՝ WHO's Noncommunicable Diseases Country Profiles, 2018.

[5] Ըստ տեղական զեկույցների՝ ապատեղեկատվության և դավադրության տեսությունների տարածումը նպաստեց համաճարակի խառնաշփոթության և քաղաքականացման զգացողությանը: Observations About Armenia's COVID-19 Response, EVN Report, July 6, 2020.

ԱՄՆ ՄԶԳ կողմից օժանդակություն ստացող զբոսաշրջության ոլորտում, ըստ ՀՀ Կառավարության Զբոսաշրջության կոմիտեի գնահատականի՝ 2020 թվականին տեղի է ունեցել եկամտի 40 տոկոսով կրճատում, ինչը 500 միլիոն դոլարի վնաս է կազմում տնտեսության համար, իսկ մատակարարների համար հանգեցնում է բազմապատկիչ բացասական ազդեցության: Ինչպես ապրանքների, այնպես էլ ծառայությունների արտաքին պահանջարկի ժամանակավոր անկումը և ապրանքների գների անկումը Համաշխարհային բանկին ստիպեցին վերանայել 2020 թվականի տնտեսական աճի կանխատեսումները՝ 4,9 տոկոսի աճից մինչև 2,8 տոկոսի կրճատում[6]: Վերլուծաբաններից շատերը լավագույն դեպքում 2021 թվականից շուտ տնտեսական վերականգնում չեն կանխատեսում:

2020 թվականի մարտին կառավարությունը սկսեց իրականացնել COVID-19- ի ազդեցության մեղմացման տնտեսական աջակցության միջոցառումներ՝ մինչև 300 միլիոն ԱՄՆ դոլարի օգնություն տրամադրելու համար: Սոցիալապես անապահով բնակչությանը, փոքր և միջին ձեռնարկություններին, գյուղատնտեսական ձեռնարկություններին և այլ ենթախմբերին աջակցություն է տրամադրվել առևտրային վարկերի սուբսիդիաների և միանվագ վճարների տեսքով: Սա նշանակալի քայլ է, սակայն, այնուամենայնիվ, լրացուցիչ օժանդակություն է պահանջվում քաղաքականության և ծրագրային մեխանիզմների մշակման համար պատասխանատու նախարարություններին և հաստատություններին, ինչը հնարավորություն կտա իրականացնել ավելի ընդլանված արձագանքման և օժանդակության նախաձեռնություններ: Չնայած խթանիչ ջանքերն ուղղված են տնտեսական անկման զսպմանը, COVID-19- ի երկարաժամկետ հետևանքները, ամենայն հավանականությամբ, զգալի կլինեն և ներառում են ապրանքների և ծառայությունների սպառման կրճատում և ներդրումների հետաձգում կամ բացթողում: Կառավարության հանդեպ հասարակության վստահության թուլացման վտանգ կա դանդաղ տնտեսական վերականգնման և անբարենպաստ դերակատարների գործողությունների պատճառով, որոնք ձգտում են խաթարել վստահությունը դեպի ժողովրդավարական կառավարություն:

ԱՄՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Չնայած Հայաստանում ԱՄՆ արտաքին քաղաքականության գերակայությունները սահմանվել են COVID-19- ի բռնկումից առաջ, դրանք համապատասխանեցված են տեղական նոր համատեքստի այլ հիմնական ասպեկտներին, հարմարեցված են ՀՀ Կառավարության առաջնահերթություններին և արտահայտված 2018-2021 թվականների Երկրի ինտեգրված ռազմավարության (ԵԻՌ) մեջ: ԵԻՌ- ը հիմնված է ազգային անվտանգության ավելի բարձր մակարդակի և արտաքին քաղաքականության ռազմավարական ծրագրերի վրա և կապակցված է դրանց հետ, ներառյալ ԱՄՆ ազգային անվտանգության ռազմավարությունը (ԱԱՌ), Պետդեպարտամենտի և ԱՄՆ ՄԶԳ Համատեղ ռազմավարական ծրագիրը (ՀՌԾ) և Եվրոպական և եվրասիական հարցերի պետական բյուրոյի Համատեղ տարածաշրջանային

[6] COVID-19- ի տնտեսական ազդեցության վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար տե՛ս Համաշխարհային բանկի խմբի Global Economic Prospects for June 2020: Europe and Central Asia, և Համաշխարհային բանկի խմբի Armenia Monthly Economic Update, Մայիս2020թ..

ռազմավարությունը (ՀՏՌ): Մի շարք հատուկ թեմատիկ առաջնահերթություններ փոխկապակցում են ԱՄՆ Պետդեպարտամենտի արտաքին քաղաքականության տարբեր շրջանակները՝ ավելի հստակ սահմանում և կենտրոնացում ապահովելով ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից հայաստանյան համատեքստի մեկնաբանման և ԱՄՆ զարգացման ռեսուրսների մոբիլիզացման համար՝ ԱՄՆ արտաքին քաղաքականության նպատակների հետ լավագույնս համապատասխանեցված ոլորտներում առավելագույն ազդեցության հասնելու նպատակով :

Ըստ ԱՄՆ ՄԶԳ «Ճանապարհ դեպի ինքնապահովում» (J2SR) ճանապարհային քարտեզի, Հայաստանը, կարծես թե, ցածր և միջին եկամուտ ունեցող երկրների չափանիշների համաձայն առաջընթաց ունի դեպի ինքնապահովում ճանապարհին: J2SR չափորոշիչները հստակ ցույց են տալիս Հայաստանի զարգացման առաջընթացը սոցիալական խմբերի հավասարության, առևտրի ազատության, քաղաքացիական հասարակության և ԶԼՄ-ների արդյունավետության, մանկական առողջության և ՏՀՏ-ի որդեգրման որոշակի միջոցառումներում: Այնուամենայնիվ, ինչպես քննարկվում է ստորև, այդ բարձր մակարդակի դրական ցուցանիշները չեն արտացոլում երկրի բարդ և բազմազան համատեքստը: Օրինակ, թեև Հայաստանում առևտրի ազատության 0,74 գնահատականը առաջադեմ է թվում, Հայաստանի չորս միջազգային սահմաններից երկուսը փաստորեն փակ են առևտրի և ճանապարհորդությունների համար, հարևան Իրանի հետ առևտրային հնարավորությունները սահմանափակ են, իսկ Վրաստանի տարածքով բարձր տրանսպորտային ծախսերը նվազեցնում են ներուժը: Հայաստանի հարևան երկրների հետ առևտրի հնարավորությունը ավելի ճշգրիտ կարելի է որակել որպես խիստ կաշկանդված: J2SR- ի այլ ցուցանիշների ինքնապահովման բացերը, հավանաբար, ավելի պարզ են և ունեն համեմատաբար ավելի ցածր միավորներ, որոնք համահունչ են ազատական ժողովրդավարության, տնտեսական գենդերային խզվածքի, բիզնես միջավայրի, կառավարության կարողությունների տարբեր չափումների, աղքատության, մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի և կատարելագործված արտահանման բնագավառներում նկատվող խզումների հետ:

J2SR ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ. ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ

Հայաստանն, ամենայն հավանականությամբ, մեծ առաջխաղացում ունի J2SR ճանապարհային քարտեզի «հանձնառության» չափման ուղղությամբ՝ ստանալով Վրաստանի միավորի հետ համեմատելի հանձնառության միավոր: Այնուամենայնիվ, չնայած ժողովրդավարության բազմազանության (V-Dem) չափանիշները ժողովրդավարական որակի մասով կտրուկ աճեցին 2018-ին՝ թավշյա հեղափոխությունից հետո, աճը հաշվարկվել է ցածր ելակետային մակարդակից: Բացի այդ, «Ազատական ժողովրդավարության ցուցիչ» գնահատականը միայն մի –փոքր է բարձր աշխարհի ցածր և միջին եկամուտ ունեցող բոլոր երկրների միջին ցուցանիշից: Վերջին առաջընթացի ոլորտները ներառում են գործադիր իշխանության, խոսքի ազատության և միավորումներ կազմելու ազատության օրենսդրական սահմանափակումների V-Dem միջոցառումները:

Հայաստանը գտնվում է բարդ և ձգձգվող քաղաքական անցման փուլում, և ժողովրդավարական հանձնառության այդ բարելավումների հարատևությունը դեռ տեսնել է պետք: Երկար սպասված ժողովրդավարական համախմբման ճանապարհը ամենևին երաշխավորված չէ և հղի է հնարավոր ձախողումներով, քանի որ տեղական վնասարարներն ու արտաքին անբարենպաստ դերակատարները ձգտում են ապալեգիտիմացնել բարեփոխումներին միտված կառավարությունը: Բացի այդ, չնայած առաջընթաց է գրանցվել Հայաստանի ընդհանուր Լիբերալ ժողովրդավարության գնահատականի մասով, գործադիր իշխանության դատական սահմանափակումների մասով առկա է զգալի պակասուրդ (տե՛ս նկարը աջից):[7] Օրենքի գերիշխանությունը այն ոլորտն է, որտեղ դեռ շատ աշխատանք կա կատարելու: Շարունակական ջանքեր են անհրաժեշտ բարեփոխելու համար այն դատական համակարգը, որը զուգորդվում է նախկին ռեժիմի հետ, ունի հասարակության կողմից հավանության շատ ցածր մակարդակ, չունի բավարար ռեսուրսներ և կարողություններ և լայնորեն դիտարկվում է որպես գործադիր իշխանության նկատմամբ իմաստալի ժողովրդավարական սահմանափակումներ կիրառելու անկարող:



Գծապատկեր 1. Հայաստանի V-Dem լիբերալ ժողովրդավարության գնահատականը

Տնտեսական աճի առումով, J2SR բացերը ցույց տվող հանձնառությունների նշանակալի միջոցները ներառում են տնտեսական գենդերային խզվածքը (մասնավորապես կանանց մասնակցությունը տնտեսությանը), աշխատավարձերի հավասարությունը նմանատիպ աշխատանքի համար և գնահատված վաստակած եկամուտը: «Լեգատում» ինստիտուտի՝ բիզնեսի համար նպաստավոր միջավայրի չափանիշը ներառում է համեմատաբար ցածր գնահատականներ անվճարունակության լուծման դյուրինության, ֆինանսական ծառայությունների մատչելիության, բիզնեսի զարգացման և մարդկային ռեսուրսների արդյունավետ գործելակերպերի խթանման ուղղությամբ:

J2SR ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ. ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Չնայած 2010 թվականից ի վեր Հայաստանը կարողությունների չափումների մասով առաջընթաց է գրանցել, այն այնուամենայնիվ հետ է մնում Եվրոպայի և Եվրասիայի (ԵԵ) տարածաշրջանի գրեթե բոլոր մյուս երկրներից՝ ներառյալ Վրաստանը, Ուկրաինան, Սերբիան, Բոսնիան, Մակեդոնիան, Մոլդովան և Բելառուսը: Կառավարության արդյունավետության ցածր գնահատականները արդյունք են պետական կառավարման ոլորտում անբավարար ներդրումների ժառանգության, ինչպես նաև նախկին

[7] «0-1» ավելի բարձր միավորները ներկայացնում են ավելի առաջադեմ արդյունքներ: Աղբյուրը. Varieties of Democracy (V-Dem) ծրագիր, V-Dem Institute, Տարբերակ 9, 2019.

իշխանությունների օրոք պետական հատվածի կոռուպցիայի և ծանոթ-բարեկամների գերադասման արդյունքների: Չնայած Հայաստանի ներկայիս կառավարությունը հանձն է առել ազգային և տեղական մակարդակներում վարչական կարողությունների զարգացումը, նրանք ընդունում են, որ սա լինելու է երկարաժամկետ բարեփոխումների միտված աշխատանք՝ ուղղված պետական աշխատողների հավաքագրման, պահպանման և աշխատանքի ընթացքում ուսուցման ամրապնդմանը:

Աղքատությունը շարունակում է լուրջ մարտահրավեր հանդիսանալ Հայաստանի համար, որտեղ բնակչության ավելի քան 40 տոկոսն ապրում է օրական 5 դոլարից ցածր եկամուտով: Որպես համեմատություն՝ Ուկրաինայում բնակչության ընդամենը հինգ տոկոսն է ապրում օրական $ 5-ով պակաս գումարով:[8] Բացի այդ, Հայաստանի տնտեսության կարողությունները կաշկանդված են մեկ շնչի հաշվով եկամտի համեմատաբար ցածր մակարդակով՝ Եվրոպայի և Եվրասիայի երկրների համեմատությամբ, ինչպես նաև կատարելագործված արտահանման բացակայությամբ: Հայաստանի արտահանման ոլորտը փոքր է, իսկ կատարելագործված արտահանման մակարդակը՝ ցածր, և էլ ավելի է վատթարանում: Հայաստանի շատ արտահանումներ համեմատաբար ցածր ավելացված արժեք ունեն և մշակված չեն, և այդ տեսակի արտահանման ապրանքաշրջանառությունն աճել է միայն 2015 թ. Հայաստանի Եվրասիական տնտեսական միությանը անդամակցելուց հետո: Արտահանման ոլորտներում և ապրանքատեսակներում գերիշխում են առաջնային ապրանքները, մինչդեռ արտահանվող ապրանքի միայն 50 տոկոսն են կազմում օգտակար հանածոները, գյուղատնտեսական ապրանքները, քարը, մետաղները և այլ առաջնային ապրանքներ: Հատկանշական է, որ 2017-ին ծառայությունները կազմել են Հայաստանի արտահանման ոլորտի 45 տոկոսը, ներառյալ միջազգային տուրիստական մուտքերից արտահանումը (ընդհանուր արտահանման 26 տոկոսը) և ՏՀՏ-ն (ընդհանուր արտահանման 11 տոկոսը):[9] Օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) մուտքերը նույնպես լճացած վիճակում են և այդ ուղղությամբ Հայաստանը բավականին հետ է տարածաշրջանի մյուս երկրներից:[10]
Ակնկալվում է, որ COVID-19 համավարակի պատճառով օտարերկրյա ներդրումները կշարունակեն կրճատվել:

J2SR ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ. ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ

Ինչպես նշվեց, J2SR ճանապարհային քարտեզի որոշ գլոբալ ցուցանիշներ կամ չեն արտահայտում տեղական համատեքստը, կամ ցույց չեն տալիս իրական, էական

[8] Ներկայացնում է տնային տնտեսություններում բնակվող բնակչության այն տոկոսը, որն աղքատության շեմից ցածր է մեկ անձի կտրվածքով (օրական $ 5, գնողունակության հավասարության պայմաններում): Աղբյուրը՝ World Bank, Povcalnet, 2019.

[9] Atlas of Economic Complexity, Harvard University, 2019.

[10] Հայաստանը 2018 թ.-ին ՕՈՒՆ միջին ներհոսքի մասով զբաղեցրել է համար 43-ից 38-րդ տեղը ԵԵ: Աղբյուրը՝ ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման խորհրդաժողով (UNCTAD), UNCTADstat:

մարտահրավերները: Սա, հավանաբար, առավել նկատելի է սոցիալական խմբերի հավասարության, քաղաքացիական հասարակության և լրատվամիջոցների արդյունավետության և մանկական առողջության J2SR միջոցառումներում: Սոցիալական խմբերի հավասարության V-Dem ցուցիչը չափում է քաղաքական հավասարությունը քաղաքացիական ազատությունների պաշտպանության առումով սոցիալական խմբերում, որոնք առանձնանում են ըստ էթնիկ պատկանելության, կրոնի, կաստայի, ռասայի, լեզվի և տարածաշրջանի: Քանի որ հայաստանյան հասարակությունն ունի սոցիալական համախմբվածության աշխարհում ամենաբարձր մակարդակներից մեկը, ներառյալ լեզվական և կրոնական միատարրության բարձր մակարդակը, այս ցուցանիշը շատ բարձր է [11]: Այնուամենայնիվ, Հայաստանը շարունակում է բախվել մարդու իրավունքների զգալի մարտահրավերների, որոնք արտացոլված չեն այս ընդհանրական չափանիշով, մասնավորապես՝ հետապնդումներ, խտրականություն ու բռնություն կանանց (ներառյալ ընտանեկան բռնությունը) և ԼԳԲՏԻ համայնքի անդամների նկատմամբ: Անբարենպաստ դերակատարները ակտիվորեն շահարկում են այս վերջին խնդիրը՝ ձգտելով սեպ խրել իրենց կողմից որպես արևմտյան և տարածաշրջանային ներկայացվող արժեքների միջև: [12]



Գծապատկեր 2. Հայաստանի ՔՀԿ կայունության

Քաղաքացիական հասարակության և լրատվամիջոցների արդյունավետության չափման գնահատականը նույնպես շատ բարձր է (տե՛ս աջ կողմի նկարը): [13] Չնայած Հայաստանի քաղաքացիական հասարակության ու անկախ լրատվամիջոցների ոլորտներում զարգացման առաջընթաց է գրանցվել, մասնավորապես քաղաքացիական հասարակության շահերի պաշտպանության և հետաքննող լրագրության ոլորտներում (մասամբ ԱՄՆ ՄԶԳ-ի կայուն օգնության միջոցով), այդ ոլորտները դեռևս ունեն սուր կարիքներ, մասնավորապես՝ ֆինանսական կայունության / կենսունակության, լրատվամիջոցների սեփականության և մասնագիտական բարեվարքության առումով: Անհրաժեշտ կլինի պահպանել և հետագայում բարելավել քաղաքացիական հասարակության և ԶԼՄ-ների համար նպաստավոր միջավայրի ձեռքբերումները՝ կառավարության բարեփոխումների ջանքերը հիմնավորելու, գործադիր իշխանության վերահսկողությունն

[11] Governance in Armenia: An Evidence Review, ԱՄՆ ՄԶԳ, Հունվար 2019.

[12] World Report 2020: Armenia, Human Rights Watch, 2020.

[13] Այս ինդեքսն օգտագործում է 7 բալանոց սանդղակ, որտեղ 1-ն առավել բարելավվածն է է, իսկ 7-ը՝ առավելագույն խոչընդոտվողը: Աղբյուր՝ 2019 քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կայունության ցուցիչ. Հայաստան, ԱՄՆ ՄԶԳ, հուլիս, 2020 թվական:

ուժեղացնելու և ապատեղեկատվությանն և անբարենպաստ ազդեցությանը հակազդելու նպատակով:

Երրորդ ոլորտը, որտեղ J2SR ճանապարհային քարտեզը չի ապահովում ամբողջական պատկերը, Հայաստանի առողջապահական ոլորտն է: Չնայած Հայաստանում մանկական առողջության պահպանման միավորը բարձր է, ինչը նախորդ ռազմավարության ժամանակաշրջանում աջակցությունը առողջապահության ոլորտում դադարեցնելու հիմնավորումներից մեկն էր, զարգացող COVID-19 համավարակը լուրջ փորձությունների է ենթարկում երկրի առողջապահական համակարգի կարողությունները: Ինչպես նշվեց, Հայաստանն ունի աշխարհում մեկ շնչի հաշվով COVID-19 վարակի ամենաբարձր ցուցանիշներից մեկը, բնակչությունը խոցելի է տեղային վարակման նկատմամբ և ռիսկային է՝ ծանր հիվանդության զարգացման առումով՝ բազում հարակից հիվանդությունների պատճառով: Ժամանակ կպահանջվի , որպեսզի լիովին դրսևորվի COVID-19- ի ամբողջական ազդեցությունը Հայաստանի առողջապահական համակարգի և բնակչության վրա, ինչը այս ռազմավարության իրականացման ընթացքում հետագա վերանայման և քննարկման առարկա կդառնա:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԸ

2019թ. *«Ազատությունն աշխարհում»* զեկույցը ցույց տվեց, որ ամբողջ աշխարհում տասնչորսերորդ տարին անընդմեջ ժողովրդավարական ազատությունները անկում են ապրում: Այնուամենայնիվ, Հայաստանի նշանակալից ժողովրդավարական ձեռքբերումները ճանաչվել են V-Dem– ի 2020թ. Ազատական ժողովրդավարության ցուցիչով, ըստ որի Հայաստանն աշխարհում երկրորդ ամենաբարձր ձեռքբերումն է գրանցել: Բացի այդ, Freedom House-ի 2020 թ. «Անցումային երկրներ» զեկույցում նշվում է, որ Հայաստանում գրանցվել է բոլոր երկրների միջև ամենամեծ երկամյա բարելավումը այդ ցուցիչի ողջ պատմության ընթացքում: Երկրի ՝ տարածաշրջանի այլ վայրերում ժողովրդավարական բարեփոխումներ ներշնչելու կարողությունը հանգեցրել է նրան, որ վերածնվող ավտորիտարիզմի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին դերակատարները փորձում են խափանել և վարկաբեկել Հայաստանի այս անցումը:

Ռուսաստանը Հայաստանի տնտեսական, անվտանգության և էներգետիկ ոլորտների առանցքային գործընկերներից է: Ռուսաստանն ունի Հայաստանում տեղակայված երկու ռազմաբազա, մոտավորապես 5,000 ռուսական զորք տեղակայված է Թուրքիայի հետ նրա սահմանի մոտ: Հայաստանի ինտեգրումը Ռուսաստանի տնտեսությանը բավական ընդարձակ է, իսկ Հայաստանի մասնակցությունը Եվրասիական տնտեսական միությանը խրախուսում է սերտ ինտեգրում Ռուսաստանի տնտեսության հետ: Ներկայումս Հայաստանը ապավինում է Ռուսաստանին իր էներգիայի զուտ ներմուծման ավելի քան 60 տոկոսի մասով: Տրանսֆերտները կազմում են Հայաստանի ՀՆԱ-ի մոտ 11 տոկոսը, որի 54 տոկոսը ներհոսում է Ռուսաստանից: Հայաստանում ուղղակի օտարերկրյա ներդրումների (ՕՈՒՆ) ծավալի մոտ կեսը գալիս է Ռուսաստանից, իսկ 2017 թ.-ին Ռուսաստանի կողմից Հայաստանին տրամադրվող օգնությունը կազմել է 28 մլն դոլար: Հայաստանցիների մեծ մասը նորություններ

և տեղեկատվություն են ստանում հեռուստատեսությունից, որտեղ գերակշռում են ռուսաստանյան հաղորդումները:

Աճում է Հայաստանում Չինաստանի ազդեցությունը: Չնայած Չինաստանի հետաքրքրությունը Հարավային Կովկասի նկատմամբ համեմատաբար վերջերս է ի հայտ եկել՝ իր գլոբալ նկրտումների ընդլայնմանը զուգահեռ, այն հեռահար նպատակով խաղ է խաղում՝ առևտրային կապեր ստեղծելու և մշակութային կապերը ընդլայնելու համար: Այն ԱՄՆ դեսպանատնից մեկ կիլոմետր հեռավորության վրա դեսպանատան նոր շենք է կառուցում, որը կլինի Չինաստանի երկրորդ ամենամեծ դեսպանությունը տարածաշրջանում (ամենամեծը Ռուսաստանում է): Հաշվի առնելով աշխարհաքաղաքական հանգամանքները և պատմական Մետաքսի ճանապարհի երկայնքով տեղակայված լինելը՝ Հայաստանը պատրաստվում է ընդլայնել Չինաստանի հետ տնտեսական կապերը, մասնավորապես ՝ որպես ներդրումների աղբյուր և արտահանման շուկա: Չինաստանի հետ առևտուրը 2018-ից 2019 թվականներին աճել է մոտ 22 տոկոսով, և Չինաստանը ներկայումս հանդիսանում է Հայաստանի 3-րդ խոշորագույն առևտրային գործընկերը ԵՄ-ից և Ռուսաստանից հետո: Չինաստանի օգնությունը Հայաստանին կայուն տեմպերով աճում է. 2018 թվականին Չինաստանը Հայաստանին տրամադրել է գրեթե 20 միլիոն ԱՄՆ դոլարի մարդասիրական աջակցություն: Չինաստանը նաև ավելացրել է իր ներգրավվածությունը Հայաստանի կրթական ոլորտում՝ նպատակ ունենալով հայ երիտասարդների շրջանում ձևավորել Չինաստանի նկատմամբ մշակութային մտերմություն:

Հայաստանի համար մարտահրավեր է նաև տարածաշրջանային կատաղի հակամարտությունը: Հայաստանը շրջափակված է արևմուտքից՝ Թուրքիայի հետ փակ սահմանի, արևելքից՝ Ադրբեջանի հետ հակամարտության պատճառով, ինչը լուրջ հետևանքներ ունի երկրի ինքնապահովման հեռանկարների համար: Հարավից Հայաստանը պահպանում է Իրանի հետ բաց սահմանը: Չնայած այս բաց սահմանը նեղ ուղի է տրամադրում առևտրային և համագործակցային սահմանափակ հարաբերությունների համար, Իրանի նկատմամբ ԱՄՆ-ը պատժամիջոցներ է սահմանել՝որպես ահաբեկչության հովանավոր պետություն: Հյուսիսից Հայաստանը պահպանում է իր հավանաբար ամենամոտ հարաբերությունները Վրաստանի հետ: Երկու երկրներն ունեն խորը և առարկայական ընդհանուր օրակարգ՝ հիմնված ընդհանուր շահերի վրա, ներառյալ էներգիայի տարածաշրջանային առքուվաճառքի, արտահանման, տրանսպորտային լոգիստիկ ապահովումը և տարածաշրջանային զբոսաշրջության ոլորտում համագործակցությունը: Նույնիսկ հաշվի առնելով Վրաստանի հետ դրական հարաբերությունները՝ հարևանների պատճառով Հայաստանի առջև ծառացած մարտահրավերների քանակը բարդություններ է առաջացնում երկրի ինքնապահովման ճանապարհին: Միացյալ Նահանգների, Եվրոպայի, Ռուսաստանի և Մերձավոր Արևելքի հայկական մեծ Սփյուռքը անկախությունից ի վեր ակտիվ դերակատարում է ունեցել Հայաստանի զարգացման գործում և շարունակում է աջակցել նախագծերին ամբողջ երկրում:

Գծապատկեր 3. Հայաստանի աշխարհագրական սահմանների քարտեզ

III. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ

ՃԱՆԱՊԱՐՀ ԴԵՊԻ ԻՆՔՆԱՊԱՀՈՎՈՒՄ

ԱՄՆ ՄԶԳ-ի՝ Հայաստանի հետ նոր գործընկերության տեսլականը հարմարեցված է 2018թ. թավշյա հեղափոխության և դրան հաջորդած քաղաքական անցման արդյունքում ստեղծված բարեփոխումների ժողովրդավարական մղմանը: Կարևորելով կարողությունների զարգացումը և առաջ տանելով Հայաստանի ինքնապահովման հանձնառությունը՝ ԱՄՆ ՄԶԳ-ն համագործակցելու է կառավարության, մասնավոր հատվածի, քաղաքացիական հասարակության և քաղաքացիների հետ՝ հայաստանցիներին իրենց սեփական զարգացումը

առաջնորդելու հնարավորություն ընձեռելու համար: ԱՄՆ ՄԶԳ-ն կաջակցի Հայաստանի հաստատություններին և շահագրգիռ կողմերին օգտվել Հայաստանի պատմության մեջ այս բեկումնային կետի ընձեռած հնարավորություններից:

Այս տեսլականի իրականացումը նշանակում է, որ ԱՄՆ ՄԶԳ-ն նախաձեռնելու և խթանելու է ռազմավարական գործընկերություն, որը հնարավորություն կտա ՀՀ կառավարությանը և տեղական դերակատարներին ավելի մեծ պատասխանատվություն ստանձնել Հայաստանի զարգացման ուղու համար: Որպեսզի այս մոտեցումն արդյունավետ լինի, ԱՄՆ ՄԶԳ-ն այլ եղանակով կաշխատի նոր ռազմավարական շրջափուլում՝ ապահովելու համար Հայաստանի՝ ռազմավարական գործընկեր դառնալը: Այս փոփոխությունը անհրաժեշտ է դարձնում հաշվետվողականության համակարգերի մոտեցումը ներդնելը, որի միջոցով բազմաթիվ մակարդակներում ձևավորվում են ժողովրդավարական և տնտեսական ինստիտուտների կարողությունները, հարմարվողականությունը և կայունությունը և ճանաչվում են հիմնական դերակատարները, նրանց փոխհարաբերությունները և բարեփոխումների համար անհրաժեշտ խթանները: Այս մոտեցումը կհանգեցնի համապարփակ և կայուն արդյունքների՝ ներկայիս կառավարության հարատևության սահմաններից զատ: Այն նաև թույլ կտա ԱՄՆ ՄԶԳ-ին ընդլայնել մասշտաբները և նպատակաուղղել այն ջանքերը, որոնք առավելագույնս համահունչ են ԱՄՆ Կառավարության առաջնահերթություններին և առավելագույն ազդեցություն ունեն Հայաստանի ինքնապահովման ճանապարհի առաջխաղացման վրա: Այս մոտեցումը նաև նշանակում է, որ ԱՄՆ ՄԶԳ -ն կնպաստի տեղական ներգրավված լինելու զգացողության ավելացմանը, կխթանի մասնավոր հատվածի կողմից ղեկավարվող լուծումները և կներգրավի հայաստանյան շահագրգիռ կողմերին ՝ կարողությունների և հետագա հանձնառության ձևավորման համար: Մասնավոր հատվածի ներգրավվածությունը (ՄՀՆ) ինստիտուցիոնալացվելու և ինտեգրվելու է ամբողջ ծրագրապանակում: Մասնավորապես, ԱՄՆ ՄԶԳ-ն կօգտագործի ՄՀՆ մի շարք մոտեցումներ, այդ թվում՝ պետական-մասնավոր հատվածի երկխոսությունների խթանումը, համագործակցությունը ԱՄՆ մասնավոր հատվածի հետ՝ ներգրավվածության հավանական ոլորտները սահմանելու և մասնավոր հատվածի մասնակցությունը խթանելու համար երկու ԶՆ-երում էլ: Տեղական սեփականության զգացումը նույնպես կարևորվելու է գործունեության զարգացման համատեղ ստեղծման և համաձևավորման փուլերի միջոցով:

ԱՄՆ ՄԶԳ աջակցությունը կհամապատասխանեցվի ԱՄՆ արտաքին քաղաքական գերակայություններին և կանդրադառնա J2SR նկատելի բացերին՝ սատարելով կառավարության կարևոր բարեփոխումները, այդ թվում՝ դատական համակարգի բարեփոխումները՝ որպես ազատական ժողովրդավարության ենթաբաղադրիչ, հակակոռուպցիոն, պետական հատվածի արդյունավետության, բիզնես միջավայրի բարեփոխումները, տնտեսական կառավարման բարելավումները, նպատակային բարձր աճի ոլորտներում կատարելագործված արտահանման առաջընթացը և Հայաստանի տնտեսական գենդերային խզվածքը փոքրացնելու համակցված ջանքերը: ԱՄՆ ՄԶԳ-ը առաջ է մղելու ոլորտային երկու լայն նպատակներ, որոնցից մեկը կենտրոնացած է ժողովրդավարության, մարդու իրավունքների և կառավարման, իսկ երկրորդը ՝ տնտեսական աճի, էներգետիկայի և շրջակա միջավայրի շուրջ: Այս նպատակներին կաջակցեն երեք խաչվող թեմաներ, որոնք կոչված են խթանել Հայաստանի կայունությունը ՝ անդրադառնալով խաղաղության

կառուցմանը, անբարենպաստ ազդեցությանը դիմակայելուն, ինչպես նաև աղետների կանխարգելմանը, պատրաստվածությանը և արձագանքմանը:

ՏԱՐԲԵՐՎՈՂ ՄՈՏԵՑՈՒՄ

Այս ռազմավարությունը պատրաստելիս ԱՄՆ ՄԶԳ-ն գնահատել է իր ընթացիկ ծրագրերը՝ գործողությունները J2SR ճանապարհային քարտեզի տվյալների միջոցով սահմանված բացերին համապատասխանեցնելու, ինչպես նաև այդ ծրագրերի ներուժը՝ Հայաստանի ինքնապահովումը ամրապնդելու և ձևավորելու համար: Այս վերանայման համար որպես ֆոն ծառայեց տեղական համատեքստում Թավշյա հեղափոխության առաջացրած կտրուկ փոփոխությունը, որը կասկածի տակ դրեց նախկինում ունեցած ենթադրությունները և նոր մոտեցումների անհրաժեշտություն ստեղծեց Հայաստանում ԱՄՆ ՄԶԳ ծրագրերի մեծ մասի համար: ԱՄՆ ՄԶԳ-ն կփոխի մոտեցումը շատ գործողությունների նկատմամբ, որոնք համահունչ են J2SR ճանապարհային քարտեզի բացերին, սակայն այս փուլում պահանջում են զգալի վերաձևակերպում: Ծրագրային այս ոլորտներն են հակակոռուպցիոն գործունեությունը, քաղաքացիական հասարակությունը և ԶԼՄ-ները, տեղական ինքնակառավարումը, երիտասարդության ներգրավվածությունը, աշխատուժի զարգացումը, էներգետիկան, կանանց տնտեսական հզորացումը, արտահանման կատարելագործումը, բիզնեսի համար նպաստավոր միջավայրի ստեղծումը, բնական ռեսուրսների կառավարումը և մարդու իրավունքները: Օրինակ, ԱՄՆ ՄԶԳ-ն համագործակցելու է Թմրամիջոցների դեպ պայքարի և իրավապահ համագործակցության միջազգային բյուրոյի (ԹՊԻՀ) և այլ միջգերատեսչական, դոնոր, կառավարական և ոչ պետական շահագրգիռ կողմերի հետ՝ հակակոռուպցիոն ծրագրերի նկատմամբ հաշվետվողականության համակարգերի մոտեցման դրսևորման հարցում՝ աջակցելով կոռուպցիոն գործողությունների ու դերակատարների կանխարգելման, մեղմացման և պատժի ինստիտուտների զարգացմանը: ԱՄՆ ՄԶԳ-ն նաև կշարունակի կենտրոնացնել իր ծրագրերը նկատելի այն ոլորտներում, որտեղ Առաքելությունը արդյունավետ մոտեցում և փոփոխություններ է մշակել, ինչը խթանում է Հայաստանի ինքնապահովման առաջադեմ հնարավորությունները: Շարունակական ուշադրություն պահանջող ծրագրային ոլորտներն են օրենսդրության ամրապնդումը, քաղաքական և ընտրական բարեփոխումները, կանանց քաղաքական հզորացումը և գյուղական տնտեսության զարգացումը (ներառյալ զբոսաշրջությունն ու գյուղատնտեսությունը):

Նախորդ ռազմավարական ժամանակահատվածում ԱՄՆ ՄԶԳ-ն բարեփոխումների համար ջատագովելու, իրականացնելու և գնահատելու և բարելավված վերջնարդյունքները պահպանելու տեղական կարողություններ զարգացրեց առողջության առաջնային պահպանման երեք ոլորտներում՝ տուբերկուլյոզ, մոր և մանկան առողջություն, և վերարտադրողական առողջություն: Այնուամենայնիվ, ինչպես նշվեց, ի հայտ եկած COVID-19 համավարակը, խիստ լարել և փորձության է ենթարկել Հայաստանի առողջապահական համակարգի ուժը: Որպես պատասխանատու զարգացման գործընկերներ՝ ԱՄՆ ՄԶԳ-ն սույն ռազմավարության իրականացման ընթացքում մանրամասնորեն կվերագնահատի այս կարևոր հատվածի կարիքները և, արդարացված լինելու դեպքում, կդիտարկի ՀՀ առողջապահության ոլորտում առողջապահական ծրագրերի սահմանափակ

վերագործարկումը: ԱՄՆ ՄԶԳ-ն նաև կշարունակի գնահատել իր ներգրավվածությունը սոցիալական ծառայությունների ոլորտներում ՝ հաշվի առնելով COVID-19 համավարակը և Պետդեպարտամենտի *Մարդկանց թրաֆիքինգի* զեկույցում Հայաստանի վարկանիշը վերջին նվազումը:

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԶԵԱԿԵՐՊՈՒՄ. ԴԵՊԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՆՑՈՒՄ

Դեպի ռազմավարական անցում շարժվելու և ներկայիս բարեփոխումների ներուժն իրացնելու համար Հայաստանին կպահանջվի ավելի գործունակ գործադիր կառավարություն, որը կարող է գաղափարականացնել և գործարկել վարչական հիմնական բարեփոխումները և այդ բարեփոխումների հաշվետվողականությունը: Գործադիր պատասխանատվության ինստիտուցիոնալացման և պաշտպանության համար կարևոր նշանակություն կունենան ինչպես օրենսդիր, այնպես էլ դատական մարմինների անկախությունն ու կարողությունները, ինչպես նաև ազդեցիկ միջնորդ կազմակերպությունների կարողությունները, հարթակները և քարոզարշավները, այդ թվում՝ ժողովրդավարական քաղաքական կուսակցությունների, մասնագիտական ասոցիացիաների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և անկախ լրատվամիջոցների: Տեղական կարողությունների ամրապնդման մեծ շեշտադրման միջոցով ԱՄՆ ՄԶԳ-ն կանդրադառնա Հայաստանի J2SR ճանապարհային քարտեզում հստակ սահմանված առանցքային բացին: Կարողությունների զարգացման վրա այս մեծ շեշտադրումը կվերափոխի ԱՄՆ ՄԶԳ-ի հարաբերությունները Հայաստանի հետ՝ այն ստացողից դարձնելով գործընկեր՝ հենվելով ԱՄՆ ՄԶԳ-ի ներկայիս ծրագրերի տեղական լուծումների և տեղական սեփականության ամուր հիմքերի վրա: ԱՄՆ ՄԶԳ-ն նաև նաև կօգտագործի ՀՀ Կառավարության բարեփոխումների հանձնառությունը՝ գործընկերության տարբեր ձևերի հիման վրա, ներառյալ Զարգացման նպատակների նոր պայմանագրերում (DOAG) պայմանների ներառումը, պետական-մասնավոր գործընկերության խթանումը (ՊՄԳ) և Համաշխարհային զարգացման դաշինքները (ՀԶԴ), ինչպես նաև համաստեղծման և համատեղ ներդրումների այլ հնարավորություններ:

Հայաստանի կառավարությունը ներառական աճը հստակորեն սահմանել է որպես բարեփոխումների առանցքային ոլորտ: Ի աջակցություն այս նպատակի և ըստ J2SR ճանապարհային քարտեզի տվյալների բացերի՝ ԱՄՆ ՄԶԳ-ն այս ռազմավարության շրջանակներում շեշտը կդնի գործարար միջավայրի բարելավման, տնտեսական կառավարման, տնտեսական գենդերային խզվածքի և արտահանման կատարելագործման վրա: Չնայած COVID-19 համավարակի սպառնալիքին, Հայաստանում տնտեսական աճի լուսավոր կետերից են ՏՀՏ ծառայությունների արտահանումը (ՏՀՏ ծառայությունների արտահանման մեծությամբ Հայաստանը 129 երկրների շարքում զբաղեցնում էր 15-րդ տեղը, որպես 2018 թ.-ի ընդհանուր առևտրաշրջանառության տոկոս), զբոսաշրջությունից ստացված մուտքերը (2017թ.-ին Հայաստանի արտահանման 26 տոկոսը) և գյուղատնտեսությունը (ապահովում է բնակչության շուրջ 33 տոկոսի զբաղվածությունը, COVID- ի հետևանքով ակնկալվում է որոշակի քանակի աշխատատեղերի կորուստ): Տնտեսական զարգացման այս համատեքստում ԱՄՆ ՄԶԳ մոտեցումը առաջնահերթություն կտա տնտեսական կառավարման, ոլորտի մրցունակության, էներգետիկ անկախության և բնական ռեսուրսների կայուն կառավարման բարելավմանը: ԱՄՆ ՄԶԳ-ի՝ Հայաստանի հետ հարաբերությունների

վերաիմաստավորմանն ուղղված մոտեցումները կարևորելու են կարողությունների զարգացումը, տեղական լուծումների շուրջ կայուն կենտրոնացումը և տեղական սեփականության զգացման խթանումը: Նախապատվությունը կտրվի մասնավոր հատվածի ներգրավմանը, ներառյալ մասնավոր հատվածի կողմից ղեկավարած համագործակցությունը բարձր աճ գրանցող ոլորտներում, ինչպես նաև բիզնեսի համար նպաստավոր միջավայրի բարելավման և կատարելագործված արտահանման շեշտադրումը:

Ճանաչելով Թավշյա հեղափոխությունից հետո Հայաստանում բարեփոխումների աննախադեպ հնարավորությունները, ԱՄՆ ՄԶԳ - ի Անցումային նախաձեռնությունների գրասենյակը (ԱՆԳ) 2019 թվականի մարտին սկսեց իր հայաստանյան ծրագիրը: ԱՆԳ-ն իրականացրել է արագ ազդեցության դրամաշնորհային ծրագրեր, որոնք ուղղված կլինեն քաղաքացիների ներգրավմանը բարեփոխումների մղումը պահպանելու գործում՝ այդպիսով լրացնելով առաքելության երկարաժամկետ գործունեությունը: Հիմնվելով ՀՀ կառավարության գործընկերների հետ ձևավորված հարաբերությունների վրա, ԱՆԳ ն աշխատել է նրանց հետ համատեղ՝ առաջացող կարիքները արագ հայտնաբերելու և ՀՀ –ի COVID-19 արձագանքին աջակցությունը մոբիլիզացնելու համար: ԱՆԳ ծրագիրը կշարունակվի մինչև 2022 թվականի փետրվար, իսկ ԱՄՆ ՄԶԳ երկարաժամկետ կառավարման ծրագրերը կշարունակեն աջակցել ՀՀ կառավարության ռազմավարական հաղորդակցության և հակակոռուպցիոն ջանքերին:

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄ. ԴԻՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի դիմակայունության կառուցման վրա կենտրոնացումով նաև կբնութագրվի, թե ինչպես են ԱՄՆ ՄԶԳ-ն և Հայաստանը վերաիմաստավորում իրենց հարաբերությունները նոր ռազմավարության շրջանակներում: ԱՄՆ ՄԶԳ-ն կձգտի խթանել Հայաստանի կայունությունը խաղաղության կառուցման, անբարենպաստ ազդեցության դեմ պայքարի և աղետների կանխարգելման, պատրաստվածության և արձագանքման ծրագրերի միջոցով՝ որպես խաչվող թեմաներ: Ռազմավարական շրջանակներում ծրագրերը կնպաստեն այս թեմաներին՝ հաշվի առնելով դրանց հիմնարար կարևորությունը ինքնապահովման ճանապարհին առաջընթաց գրանցելու Հայաստանի կարողության համար:

Ինքնապահովման ավելի բարձր մակարդակ ունենալու Հայաստանի կարողությունների զգալի սահմանափակումները ներառում են Ադրբեջանի հետ ձգձգվող հակամարտությունը և Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունների բացակայությունը: Աշխարհաքաղաքական իրավիճակը պատմական խորը և բարդ արմատներ ունի, ինչը հանգեցրել է Հայաստանի տարածաշրջանային մեկուսացմանը: Ադրբեջանի հետ շարունակվող հակամարտությունը թանկ է արժենում, ինչը շեղում է հանրային ռեսուրսները ժողովրդավարական, տնտեսական և սոցիալական զարգացման գերակայություններից: [14] Խաղաղության կառուցումը ավելի երկարաժամկետ ջանք է, որը դուրս է այս ռազմավարության ժամկետից և շրջանակից: Հնարավորության դեպքում, այս

[14] 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Լեռնային Ղարաբաղի շփման գծում նոր մարտեր սկսվեցին: Այս սրման ժամանակ տեղի ունեցան ամենածանր մարտերը հակամարտության 26-ամյա պատմության մեջ:

ռազմավարության շրջանակներում ԱՄՆ ՄԶԳ ծրագրերը կարող են աջակցել մարդկանց միջև ծրագրերին, որոնք կնպաստեն հաշտեցման բարենպաստ միջավայրի ստեղծմանը կամ կսատարեն Ուղի II երկխոսության ջանքերը, որոնք գործադրվում են Ուղի I պաշտոնական դիվանագիտական գործընթացին զուգահեռ: Օրինակ, ԶՆ 1-ի հիմքում ընկած քաղաքացիական ներգրավվածության բաղադրիչները լավ համապատասխանեցված են Ուղի II- ի գործողություններին աջակցությանը, որոնք կարող են նպաստել խաղաղ երկխոսության զարգացմանը՝ համայնքների, երիտասարդության, քաղաքացիական հասարակության ղեկավարների, լրատվամիջոցների և ազդեցիկ դերակատարների մասնակցությամբ: Ի հավելումն, ԱՄՆ ՄԶԳ ԶՆ 2-ի ջանքերը՝ ուղղված Արարատյան դաշտավայրից այն կողմ ջրային ռեսուրսների հասանելիության ու կառավարման բարելավմանը կարող են համագործակցության հնարավորություն ստեղծել Ադրբեջանի և Թուրքիայի հետ: ԱՄՆ ՄԶԳ-ն նաև հնարավորություններ կփնտրի զարգացման և մարդասիրական օգնության տրամադրման համար՝ խաղաղության կառուցմանը աջակցելու համար: Ցանկացած նման միջամտություն ուշադիր կշռադատվելու է՝ ապահովելու համար «վնաս չպատճառելու» մոտեցում և դրա էական ներդրումը ավելի դիմակայուն հասարակության մեջ:

Անբարենպաստ ազդեցությունը մեծ վտանգ է ներկայացնում Հայաստանի J2SR նպատակների համար, քանզի ինչպես արտաքին, այնպես էլ ներքին դերակատարները ձգտում են խարխլել և վարկաբեկել ժողովրդավարական բարեփոխումները: ԱՄՆ ՄԶԳ-ն կփորձի ամրապնդել Հայաստանի տնտեսական և ժողովրդավարական կայունությունը և աջակցել Հայաստանի անկախ զարգացման ուղուն՝ աշխատելով մեղմել առանցքային ինստիտուտները խաթարելու ցանկացած փորձ: ԱՄՆ ՄԶԳ-ն կօգնի Հայաստանին ամրապնդել քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, իրականացնել վստահելի ընտրություններ, ինստիտուցիոնալացնել թափանցիկությունն ու հաշվետվողականությունը պետական հաստատություններում և խթանել օրենքի գերիշխանությունը: Ազատ, անկախ լրատվամիջոցները և փաստերի վրա հիմնված լուսաբանումների առկայությունը կարևոր են քաղաքացիներին ապատեղեկատվությունից պաշտպանելու համար: ԱՄՆ ՄԶԳ-ն կզարգացնի վստահելի, անկախ նորություններ և տեղեկատվության աղբյուրներ տրամադրելու հայաստանյան լրատվամիջոցների կարողությունները, ներառյալ աջակցությունը մեդիագրագիտությանը՝ քաղաքացիներին օգնելու համար ճանաչել անբարենպաստ դերակատարների կողմից խթանվող ապատեղեկատվությունը: ԱՄՆ ՄԶԳ-ն կօժանդակի էներգիայի ներքին արտադրության դիվերսիֆիկացման ջանքերին, ինչպես նաև արդյունավետ, տնտեսական աճին նպաստող իրավական և կարգավորիչ շրջանակների և տարածաշրջանային էներգետիկ շուկաների լավ զարգացմանը: Հայաստանի տնտեսական անկախությունն ամրապնդելու և առևտրային այլընտրանքներ խթանելու նպատակով ԱՄՆ ՄԶԳ-ն օժանդակություն կցուցաբերի Հայաստանին՝ բարելավելու գործարար միջավայրը, բազմազանեցնելու արտահանումը, կանխելու կոռուպցիան և ավելացնելու արևմտյան տնտեսությունների հետ ինտեգրումը: Վերջապես, ԱՄՆ ՄԶԳ-ն կփորձի անհրաժեշտության դեպքում ընդգծել, թե ինչպես ապացուցողական որոշումների հետևողական և ժամանակին կայացման բացակայությունը՝ համաձայն արևմտյան գործարար գործելակերպերի, կարող է վնասել Հայաստանի հեղինակությանը վստահելի օտարերկրյա ներդրողների աչքերում և խաթարել նրա ազգային շահը: ԱՄՆ ՄԶԳ-ի ջանքերը՝ ուղղված Հայաստանի ինստիտուտների կայունության խթանմանը և Արևմուտքի հետ ավելի մեծ տնտեսական ինտեգրմանը, էլ ավելի

կնպաստեն Թավշյա հեղափոխությունից հետո Հայաստանի ձեռքբերումներին և կհիմնվեն վերջինիս՝ Հայաստանի համար ավելի մեծ անկախության և ինքնիշխանության խոստումների վրա:

Հայաստանի կայունության ձևավորման երրորդ խաչվող թեման երկրի կարողությունների զարգացումն է՝ պլանավորելու, արձագանքելու և վերականգնվելու բնական և մարդկային աղետներից, այդ թվում՝ համավարակներից և երկրաշարժերից հետո: ԱՄՆ ՄԶԳ-ն օժանդակություն է ցուցաբերել Հայաստանին՝ ուղղված COVID-19 համավարակին արձագանքմանը և կառավարմանը, և այս ռազմավարությունը հաշվի է առնում համաճարակի կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ազդեցությունը և դրա երկրորդական հետևանքները: Ընթացիկ մշտադիտարկման, ծրագրապանակի կիսամյակային վերանայումների և միջնաժամկետ գույքագրման միջոցառումների միջոցով ԱՄՆ ՄԶԳ-ն կշարունակի գնահատել COVID-19-ի ազդեցությունները և ըստ անհրաժեշտության հարմարեցնել ծրագրերը՝ ամրապնդելու Հայաստանի դիմակայունությունը համաշխարհային համաճարակների և ցնցումների նկատմամբ: Հայաստանը նաև հակված է մի շարք բնական աղետների՝ երկրաշարժերի, անտառային հրդեհների և սողանքների: ԱՄՆ ՄԶԳ-ն կշարունակի աշխատել ԱՄՆ օտարերկրյա աղետների օժանդակության գրասենյակի հետ՝ տեխնիկական օժանդակություն և ուսուցում տրամադրելու համար Հայաստանի կարողությունների ամրապնդմանը՝ բնական աղետների և ցնցումների ազդեցությունը կանխելու, նախապատրաստվելու, դրանց արձագանքելու և կառավարելու ուղղությամբ:

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ԱՄՆ ՄԶԳ-ն իր ամբողջ ծրագրապանակի համար խաչվող եղանակով կխթանի ոչ խտրական, ներառական և ինտեգրված զարգացման մոտեցումը: Թավշյա հեղափոխությունը պայմանավորված էր հայաստանյան հասարակության լայն շրջանակների, մասնավորապես՝ երիտասարդների և կանանց լայն մասնակցությամբ, ինչը ցուցադրեց ավելի ներառական, ներկայացուցչական քաղաքացիական և քաղաքական կյանքի արժեքը: Առաքելությունը կձգտի հիմնվել մասնակցության ընդլայնման այս առաջընթացի վրա՝ ապահովելու համար, որ բոլորը, ներառյալ նրանք, ովքեր խտրականության են բախվում և ում երկրի արտոնություններից, իրավական պաշտպանությունից կամ սոցիալական մասնակցությունից օգտվելու հնարավորությունները սահմանափակ են, կարողանան ակտիվորեն մասնակցել և օգտվել զարգացման արդյունքներից: ԱՄՆ ՄԶԳ-ն միտումնավոր ներգրավվելու և ապահովելու է երիտասարդների, կանանց և աղջիկների, հաշմանդամություն ունեցող անձանց և այլ ավանդաբար մարգինալացված խմբերի ակտիվ մասնակցությունը Հայաստանի ժողովրդավարական և տնտեսական առաջխաղացմանն ուղղված գործողություններին: Ներառական զարգացումը կընդգրկվի ԱՄՆ ՄԶԳ նախագծերի և միջոցառումների կազմման, գնումների, աշխատանքային առաջադրանքների/ ծրագրերի նկարագրերի, տարեկան ծրագրի նկարագրերի, դիմումների / առաջարկների հայտարարությունների, մշտադիտարկման և գնահատման փաստաթղթերում:

ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ և ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Այս ռազմավարությանը նախապատրաստելիս ԱՄՆ ՄԶԳ-ն պատվիրել է Կլիմայի ռիսկերի մեղմացման (ԿՌՄ) սքրինինգային գնահատում և կենսաբազմազանության վերլուծություն: Թեև J2SR ճանապարհային քարտեզի վրա Կենսաբազմազանության և բնական միջավայրի պաշտպանության միջոցառման վերաբերյալ Հայաստանի գնահատականը միջինից բարձր է ցածր և միջին եկամուտ ունեցող երկրների համար, այն հաշվի չի առնում կլիմայի փոփոխության իրական սպառնալիքները, ներառյալ երաշտը, հողի զգալի դեգրադացիան և անապատացման ակտիվ գործընթացները:[15] Կլիմայի փոփոխությունից զատ, Հայաստանի եզակի կենսաբազմազանությանը սպառնում են բազմաթիվ գործոններ, այդ թվում՝ ջրի օգտագործման ոչ օպտիմալ կառավարման գործելակերպերը, հանքարդյունաբերության և վերամշակման գործունեության պատճառով դեգրադացիան և գյուղատնտեսական աշխատանքները, որոնք հանգեցրել են գերարածեցման, հողի էրոզիայի և կենսաբազմազանության կորստի:

Այս ռազմավարական ժամանակահատվածում ԱՄՆ ՄԶԳ-ն միջոցառումներ կներառի՝ ուղղված յուրաքանչյուր ԶՆ-ի ներքո նոր ծրագրերի բնապահպանական ազդեցության մեղմացմանը: ԿՌՄ սքրինինգի և կենսաբազմազանության վերլուծության արդյունքում ստացված գնահատման արդյունքների հիման վրա առաքելության աշխատակիցները նախքան որևէ նոր գործունեություն ծրագիր սկսելու վերջնական որոշում կայացնելը կդիտարկեն բնապահպանական տարբեր գործոնների հետևանքով առաջացող ռիսկերը, ինչպիսիք են կլիմայի փոփոխությունը, ջերմոցային գազերի արտանետումները և կենսաբազմազանությունը, և կապահովեն համապատասխան բնապահպանական երաշխիքների ընդունումը:

Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքար

Մարդկանց թրաֆիքինգի մասին 2020 թ. զեկույցում առաջարկվում է, որ ՀՀ կառավարությունը միջոցներ ձեռնարկի ՄԹ խոցելի կողմերը նվազեցնելու համար, ներառյալ թրաֆիքինգի դեպքերի և զոհերի, մասնավորապես՝ աշխատանքային թրաֆիքինգի զոհերի, պրոակտիվ բացահայտումը և ՄԹ դեպքերի քրեական հետապնդումը: 2020 թ. հունիսի 4-ին ՀՀ Կառավարությունը կարևոր առաջին քայլը կատարեց՝ հաստատելով մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի 2020-2022թթ. Ազգային ծրագիրը: Սա գործողությունների համապարփակ ծրագիր է բոլոր ներգրավված կողմերի համար՝ սահմանված ժամանակացույցով: Ծրագրում առաջնահերթությունը տրվում է երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի ամրապնդմանը, զոհերի ինտեգրման ապահովմանը, կրկնության ռիսկի վերացմանը, ինչպես նաև դեպքերի բացահայտման բարելավմանը: Այն սահմանում է, թե ինչպես է ՀՀ Կառավարությունը ամրապնդելու առաջնագծում աշխատող մասնագետների կարողությունները, ավելի արդյունավետորեն կազմակերպելու կանխարգելումը և զոհերի նույնականացումը, ինչպես նաև բարելավելու աջակցությունը ՄԹ զոհերին և նրանց պաշտպանությունը:

---

[15] Climate Risk Profile: Armenia, ԱՄՆ ՄԶԳ, Հունիս 2017.

ՀՀ կառավարությանը՝ մարդկանց թրաֆիքինգի համակարգային գործոններին անդրադառնալու աշխատանքներին աջակցելու համար ԱՄՆ ՄԶԳ-ն ԵԶՀՌ ժամանակահատվածում իր ծրագրերում կներդնի միջոցառումներ՝ ուղղված մարդկանց թրաֆիքինգը կանխելու և պրոակտիվ ձևով նույնականացնելու՝ վերջինիս ջանքերի աջակցությանը: Այս ջանքերը մասնավորապես ուղղված են լինելու զեկույցի շատ կարևոր առաջարկությունների կատարմանը, այդ թվում՝ մանկական խնամքի պետական հաստատություններում մանկական աշխատանքի և երեխաների թրաֆիքինգի կանխարգելիչ միջոցառումների ստեղծմանը և իրականացմանը:

Ի հավելումն ստորև ներկայացված ԶՆ- ի տեքստում նշված միջամտությունների, ԱՄՆ ՄԶԳ-ն հետագա վերլուծություն կիրականացնի՝ ԶՆ-երի ներքո նպատակային միջամտություններ սահմանելու և իրականացնելու համար՝ իրազեկության բարձրացման և այն արմատական պատճառներին անդրադարձ կատարելու համար, որոնք երեխաներին, երիտասարդներին, կանանց և ռիսկի այլ խմբերին անպաշտպան են դարձնում թրաֆիքինգի նկատմամբ: ԱՄՆ ՄԶԳ-ն ներառելու է ՄԹՊ- ի և երեխաների պաշտպանության միջոցառումները բոլոր պայմանագրերի մեջ, ինտեգրելու է ՄԹՊ- ի և երեխաներին վերաբերող ցուցանիշները նոր և առկա գործողությունների մշտադիտարկման, գնահատման և ուսուցման մեջ և իրականացնելու է իր գործընկերներ կազմակերպությունների համար մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ իրազեկման պարբերական դասընթացներ՝ մեղմելու ԱՄՆ ՄԶԳ ծրագրերի ցանկացած ոչ միտումնավոր հետևանքներ: Զուգահեռաբար, ԱՄՆ ՄԶԳ-ն միջգերատեսչական երկխոսության մեջ կմտնի՝ մշակելու ԱՄՆ-ի համաձայնեցված ուղերձներ առանցքային կառավարության, ոչ կառավարական և դոնոր գործընկերների հետ ռազմավարական ներգրավվածության և հաղորդակցման վերաբերյալ, ինչպես նաև կմշակի հանրային ավելի ընդգրկուն արշավներ: ԱՄՆ ՄԶԳ-ի կառավարելի հետաքրքրության շրջանակներում լրացուցիչ առաջարկություններն են աշխատանքային թրաֆիքինգի ակտիվ մշտադիտարկումը ոչ ֆորմալ հատվածներում, ինչպիսիք են գյուղատնտեսությունը, շինարարությունը, հանքարդյունաբերությունը և ծառայությունները, օրենսդրության ընդունումը, որը թույլ կտա կատարել չհայտարարված աշխատանքային ստուգումներ և աշխատանքային օրենսգրքում հարկադիր աշխատանքի սահմանման ներառումը, հատուկ դպրոցներում երեխաների աշխատանքը կանխարգելելու միջոցառումները, դատավորների, փաստաբանների և հանրային պաշտպանների շրջանում ՄԹ մասնագետների ձևավորումը, իրազեկության բարձրացումը և կրթությունը անապահով խավերի և առաջին արձագանքողների համար և ՄԹ- ի վերաբերյալ իրազեկության մակարդակի բարձրացման համազգային լայնածավալ արշավը:

ՈՒՂԵՆԻՇՆԵՐ

Ռազմավարության իրականացման ընթացքում կարևոր ուղենիշներն են.

- Տարի 1. Հայաստանի 2050 թվականի ազգային վերափոխման և համապատասխան ոլորտային ռազմավարությունները ավարտականացվում են, և ՀՀ Կառավարությունը աջակցություն է ստանում՝ ուղղված COVID-19 համավարակի անմիջական ազդեցությունների կառավարմանը:

- Տարի 2. Ձևավորվում են պաշտոնական կառույցներ և ինստիտուտներ, որպեսզի մասնավոր հատվածը կարողանա Կառավարությանը կառուցողական հետադարձ կապ տրամադրել:
- Տարի 3. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն ամբողջությամբ գործարկված է՝ իր օրենսդրական մանդատի ու ռազմավարական տեսլականի իրականացման համար:
- Տարի 4. Անցկացվում են ազատ, արդար և մրցակցային խորհրդարանական ընտրություններ:
- 4-րդ տարի. Ուղիղ պայմանագրերի ընդհանուր քանակի առնվազն 40 տոկոսը կնքվում է նոր կամ թերօգտագործվող գործընկերների հետ:

Մինչև ռազմավարական ժամանակահատվածի ավարտը Առաքելության ծրագրերում կիրականացվեն ռազմավարական տեղաշարժեր, ինչպես կենտրոնացման, այնպես էլ մոտեցումների առումով: Այնուամենայնիվ, J2SR մնացած բացերը խորն են, բազմազան և զգալի: Այս խնդիրները, ՀՀ կառավարության բարեփոխումների հավակնոտ օրակարգի իրականացման հետ մեկտեղ, ամբողջությամբ չեն լուծվի հինգ տարվա ընթացքում: Քանի որ Առաքելության գործունեությունը մեծապես նպաստում է ԱՄՆ Պետդեպարտամենտի նպատակների իրականացմանը և կարևոր աջակցություն է ցուցաբերում ժողովրդավարական անցման ամրապնդմանը, ակնհայտ է, որ ԱՄՆ ՄԶԳ-ի ծրագրերն ու ներկայությունը Հայաստանում անհրաժեշտ կլինեն ռազմավարական շրջափուլից այն կողմ:

IV. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՆՊԱՏԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՄՆ ՄԶԳ-ի նպատակն է կերտել Հայաստանի կարողությունները և խթանել ինքնապահովման նրա հանձնառությունը՝ **դրանով իսկ հնարավորություն ընձեռելով օգտվել ավելի ներառական, ժողովրդավարական և տնտեսապես դիմակայուն գործընկեր դառնալու ռազմավարական անցման** հնարավորությունից: Ավելի **ներառական** Հայաստանը արտացոլում է հայ ժողովրդի արտահայտած նկրտումները և ավելի հաշվետվողական կառավարման և տնտեսական ներառականության ավելի մեծ հնարավորությունների նրակարիքը: Ավելի **ժողովրդավարական** Հայաստանը կառավարելու է ավելի մեծ արդյունավետությամբ և հաշվետվողականությամբ, ամրապնդելու է օրենքի գերիշխանությունը բոլորի համար, խթանելու է նշանակալի քաղաքական մրցակցություն և հզորացնելու է քաղաքացիներին՝ որպես Հայաստանի ժողովրդավարական նորացման պահապաններ: Տնտեսապես **ավելի դիմակայուն** Հայաստանը կամրապնդի տնտեսական կառավարումը, կբարձրացնի մասնավոր հատվածի մրցունակությունը և կայուն ձևով կկառավարի Հայաստանի բնական ռեսուրսները՝ ապահովելու համար բոլոր հայաստանցիների բարգավաճումը, այլ ոչ թե պարզապես գոյատևումը: Հաջորդ հինգ տարիները կարևոր են Հայաստանի՝ **գործընկեր դառնալու համար**, որն ավելի մեծ պատասխանատվություն է ստանձնում իր զարգացման ուղու համար, ամրապնդում է իր ինքնորոշումը և ինքնիշխանությունը, և ուժեղացնում է տնտեսական անվտանգությունն ու կայունությունը՝ քաղաքական և տնտեսական ճնշումներին և անբարենպաստ ազդեցությանը

դիմակայելու նպատակով: 2018թ. թավշյա հեղափոխության ստեղծած այս **հնարավորությունը օգտագործելու** գաղափարը ընդունում է այս պահի հրատապությունը՝ որոշելու համար, թե որքան ժամանակ բաց կմնա բարեփոխումների հնարավորության պատուհանը:

Ինչպես նշվեց, ԱՄՆ ՄԶԳ-ն գիտակցում է մի քանի խաչվող թեմաների կարևորությունը, որոնք կներառվեն Առաքելության ծրագրերում: Դրանք կենտրոնացած են հայ ժողովրդի, մասնավորապես երիտասարդ և զարգացող առաջնորդների, կառավարության և մասնավոր հատվածի կայունության ամրապնդման շուրջ, որպեսզի նրանք կարողանան ավելի լավ հարմարվել փոփոխվող ներքին և միջազգային համատեքստին և սատարել ԱՄՆ արտաքին քաղաքական գերակայությունները:

- **Խաղաղություն կառուցում.** Աջակցություն ձգձգվող տարածաշրջանային հակամարտությունների լուծման ավելի ընդարձակ, հեռահար խաղաղության կառուցման մոտեցումներին
- **Հակազդում անբարենպաստ ազդեցությանը.** Ուժեղացնել ժողովրդավարական, սոցիալական և տնտեսական դիմակայումը անբարենպաստ ազդեցությանը:
- **Աղետների կանխարգելման, պատրաստվածության և արձագանքման բարելավում.** Բարելավել բնական և մարդկային աղետները և ցնցումները կանխարգելելու, պատրաստվելու, հարմարվելու և դրանցից հետո վերականգնվելու Հայաստանի կարողությունը, ներառյալ COVID-19 համավարակը և նրա երկարաժամկետ ազդեցությունը:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿ 1. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԱՆՑՄԱՆ ԱՌԱՋԽԱՂԱՑՈՒՄ

Զարգացման վարկածի հայտարարություն. ԵԹԵ արդյունավետ և հաշվետվողական կառավարումը ինստիտուցիոնալացվի՝ ամրապնդելով օրենքի գերիշխանությունը, քաղաքական ներկայացուցչությունն ու մրցակցությունը, ինչպես նաև ժողովրդավարական բարեփոխումներ իրականացնելու կարողությունն ու հանձնառությունը, և ԵԹԵ բարձրացվի ժողովրդավարական համախմբման մեջ քաղաքացիների ներգրավվածությունը, ԱՊԱ Հայաստանը ժողովրդավարական անցման առաջընթաց կարձանագրի և ավելի դիմակայուն կդառնա անբարենպաստ ազդեցության և ժողովրդավարական հետընթացի նկատմամբ:

2018 թվականի խաղաղ քաղաքական անցումը վերջ դրեց Հայաստանում գրեթե երեք տասնամյակ տևած կոռումպացված, ավտոկրատական իշխանությանը, և ոչ բռնի բողոքների միջոցով, որոնց հաջորդեցին պատմական ազատ և արդար ընտրությունները, իշխանության եկավ ժողովրդավարական բարեփոխումներ իրականացնելու ժողովրդական ճնշող մանդատ ունեցող նոր կառավարություն: Այս տպավորիչ առաջընթացը դեպի ավելի ժողովրդավար հասարակություն, ներառյալ ընտրական գործընթացների զգալի առաջխաղացումը և կոռուպցիայի վերահսկումը, արտացոլվեց Freedom House-ի «Անցումային երկրներ 2020» ժողովրդավարության գնահատականում, որը երբևէ որևէ երկրի կողմից գրանցած ամենամեծ երկամյա բարելավումն է ցուցանիշի պատմության մեջ:

Հայաստանում կառավարման տվյալների ԱՄՆ ՄԶԳ ուսումնասիրությունը ենթադրում է, որ «ընտրական մրցակցության աճի և կառավարության շրջանառության երկարաժամկետ հետևանքները, ամենայն հավանականությամբ, բարենպաստ կլինեն բարեփոխումների գործընթացների համար»: Այնուամենայնիվ, «կոռուպցիան չի բարելավվում բազմակուսակցական ընտրությունների մեխանիկական գործառույթի արդյունքում: Դրա համար պետք է պայքարել»: Ուսումնասիրությունն այնուհետև ենթադրում է, որ «ինստիտուցիոնալ բարեփոխումները, ամենայն հավանականությամբ, հաջողության կհասնեն այնպիսի պայմաններում, երբ օժանդակող գործակալությունները և քաղաքականություն մշակողները սահմանեն (ա) բավարար ազդեցություն ունեցող ղեկավարներին, ովքեր կարող են ծառայել որպես փոփոխությունների աղբյուր, բ) կոնկրետ հաստատությունները, որոնք փոփոխման ենթակա են, գ) բարեփոխումն իրականացնելու ճիշտ ժամանակային հորիզոնը կամ «քաղաքականության պատուհանը»:[16] ԱՄՆ ՄԶԳ-ի ԶՆ 1-ի տեսլականն է օգտվել հետհեղափոխական իշխանությունների հանձնառությամբ տրամադրված հնարավորության պատուհանից և կրկնապատկել հիմնական հաշվետվողական ինստիտուտների կարողությունների զարգացումը, ինչպիսիք են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, Բարձրագույն դատական խորհուրդը և Հաշվեքննիչ պալատը՝համակարգային բարելավումների հիմքը դնելու նպատակով: Այս ջանքերը կամրապնդվեն «ոչ իշխանական դերակատարների հավաքական կազմով դեպի ավելի լավ կառավարում և ժողովրդավարացում» ավելի մեծ առաջընթաց [խրախուսելու] համար:[17]
Հեղափոխությունից հետո ՀՀ Կառավարությունը ցույց տվեց իր քաղաքական կամքն ու բարեփոխումների համապարփակ օրակարգ իրականացնելու հաձնառությունը: Ժողովրդավարական անցումը խթանելու համար Կառավարության նախագիծը ձևակերպված է 2050 թվականի Փոխակերպման ազգային ռազմավարության և մի շարք ոլորտային ռազմավարությունների միջոցով, այդ թվում՝ հակակոռուպցիոն, դատաիրավական, պետական կառավարման, տարածքային զարգացման, էներգետիկայի, զբոսաշրջության, գյուղատնտեսության և բարձր տեխնոլոգիաների: Չնայած էական մարտահրավերներին, ՀՀ կառավարությունն արդեն ձեռնամուխ է եղել հիմնական համակարգային բարեփոխումների իրականացմանը, ներառյալ՝ քաղաքական նշանակումով պաշտոնյաների փորձի պակասը և տեխնիկական կարողությունների բացերը շարքային հանրային ծառայողների աշխատակազմում, COVID-19 արձագանքը և վերականգնումը նրա հետևանքներից, նախկին ռեժիմի կողմից սնուցվող ներքին շահարկումները և ապատեղեկատվություն և արտաքին անբարենպաստ ազդեցությունը և ապատեղեկատվությունը:

Ինչպես վկայում են հուսալի հակակոռուպցիոն ռազմավարության ընդունումը, կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նպատակահարմար ստեղծումը, հակակոռուպցիոն նոր քննչական մարմին և հակակոռուպցիոն դատարան հիմնելու վերջինիս հանձնառությունը, և կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժողականություն սերմանող բարձր մակարդակի ուղերձները, ՀՀ քաղաքականության բարեփոխումների և կոռուպցիան արմատախիլ անելու

[16] Governance in Armenia: An Evidence Review, USAID, Jan 2019.

[17] Integrity Systems and the Rule of Law in Armenia: An Evidence Review, USAID, Feb 2019.

ուղղությամբ իրականացվող լայնածավալ գործողությունները ցույց են տալիս, թե ինչպես է նոր կառավարությունը հռետորաբանությունը վերածում գործնական պարտավորության: Այն նաև ազդարարում է արդարադատության ոլորտի, պետական կառավարման, պետական ֆինանսական կառավարման և տեղական զարգացման բարեփոխումների ուղղությամբ իր ստանձնած պարտավորություններին հետևելու ՀՀ Կառավարության պատրաստակամության մասին: Ունենալով մեծ փորձ և քաղված դասեր կառավարության գործընկերների հետ տարիների անմիջական գործընկերությունից, ԱՄՆ ՄԶԳ-ն, որպես զարգացման գործընկեր, համեմատական առավելություն ունի այս տեսակի համակարգային կառավարման բարեփոխումներին սատարելու գործում: Այս համեմատական առավելությունը կկիրարկվի ժողովրդավարական ինստիտուտների կարողությունները զարգացնելու ջանքերի կրկնապատկման միջոցով՝ համակարգային բարեփոխումների համար այս աննախադեպ հանձնառության մակարդակից օգտվելու համար:

Հայաստանում ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից իրականացված քաղաքացիական հասարակության և լրատվամիջոցների գնահատումը վկայում է, որ թավշյա հեղափոխությունից հետո երկիրը «հնարավորություն ունի ընդլայնելու և ամրապնդելու ժողովրդավարական և մասնակցային կառավարումը, խորացնելու և ամրապնդելու ժողովրդավարության արմատները իր քաղաքացիական մշակույթի շրջանակներում»: [18] Միջազգային հանրապետական ինստիտուտի (ՄՀԻ) անցկացրած հասարակական կարծիքի հարցումները ցույց են տալիս, որ հարցվածների աննախադեպ մասը, հատկապես երիտասարդների շրջանում, կարծում է, որ իրենք կարող են ազդել երկրում կայացված որոշումների վրա: ՄՀԻ- ի երկայնական հարցումները հաստատել են նաև, որ թավշյա հեղափոխությանը հաջորդած երկու տարվա ընթացքում քաղաքացիների լավատեսությունն ու ակնկալիքները մշտապես բարձր են մնացել: Ինքնապահովման ճանապարհին առաջընթացը պահպանելու համար Հայաստանը պետք է խուսափի ժողովրդավարական հետընթացից, որը տեղի է ունեցել է տարածաշրջանում և դրանից դուրս հեղափոխություններից հետո: Այս հետընթացը հաճախ կապված է կոռուպցիայի, քաղաքական բազմակարծության բացակայության, քաղաքացիական դեմոբիլիզացման և ներքին ու արտաքին անբարենպաստ ազդեցության հետ: Այսպիսով, ԱՄՆ ՄԶԳ ջանքերը կնպաստեն Հայաստանի զարգացման առաջընթացին և կխթանեն նրա փխրուն ժողովրդավարությունը ընդդեմ ավտորիտարիզմի վերածննդի՝ խթանելով հաշվետվողական կառավարումը, ամրապնդելով ժողովրդավարական գործընթացները և վերածելով քաղաքացիների լավատեսությունը կայուն ներգրավվածության: Օգտագործելով ժողովրդական շարժիչ ուժը և բարեփոխումների իրականացման քաղաքական կամքը՝ ԱՄՆ ՄԶԳ-ն հնարավորություն ունի ազդելու Հայաստանի երկարաժամկետ հետագծի վրա, երբ անցում կատարի կիսահամախմբված ավտորիտար ռեժիմից դեպի կայուն, իրավունքները հարգող ժողովրդավարություն, որը կարող է օրինակ ծառայել տարածաշրջանի այլ երկրների համար:

ԶՆ 1-ի նպատակն է օգնել Հայաստանին ամրապնդել հաշվետվողական և մասնակցային կառավարման իր ինստիտուտներն ու գործընթացները՝ միևնույն ժամանակ անդրադառնալով

[18] Civil Society and Media in Armenia: A Field Assessment, USAID, May 2019.

ներուժի, ինչպես նաև ներքին և արտաքին անբարենպաստ ազդեցությունների նկատմամբ կայունության մարտահրավերներին՝ երկիրը դեպի ինքնապահովում տանելու նպատակով: ԱՄՆ ՄԶԳ-ի նպատակային աջակցությունը ՀՀ Կառավարության համար որպես խթանիչ կծառայի կառավարման բարեփոխումների մղումը պահպանելու համար, երբ այն բախվի մրցակցային մարտահրավերների՝ COVID-19 համավարակից տնտեսական և սոցիալական վերականգնման առաջնահերթությունները սահմանելու հարցում: ԱՄՆ ՄԶԳ-ն կգործակցի ՀՀ կառավարության գործադիր, օրենսդիր և դատական մարմինների, քաղաքական ինստիտուտների, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և մասնավոր հատվածի հետ՝ ապահովելու համար քաղաքական կամքի և քաղաքացիների լավատեսության վերածումը իմաստալից, ինստիտուցիոնալ բարեփոխումների, որոնք կխթանեն արդյունավետ, հաշվետվողական և ներառական կառավարումը:

ԶՆ 1-ը հիմնված է բազմաթիվ գնահատումների և ապացույցների աղբյուրների վրա, ներառյալ 2019թ. Հակակոռուպցիոն և բարեվարքության համակարգերը, Օրենքի գերիշխանության և Քաղաքացիական հասարակության և լրատվամիջոցների վերաբերյալ գրականության ամփոփումներն ու դաշտային գնահատումները, 2019 թ.-ին Հայաստանում կառավարման վերաբերյալ ապացույցների ստուգումը, Հայաստանի 2019 թվականի գենդերային վերլուծության զեկույցը, Հայաստանում երիտասարդության իրավիճակի վերլուծությունը, ՀՀ կառավարության ազգային ոլորտային ռազմավարությունները և այլ երրորդ անձանց կողմից պատրաստված մի շարք զեկույցներ ժողովրդավարական անցման, հակակոռուպցիոն ոլորտի, պետական կառավարման և դատահիրավական բարեփոխումների վերաբերյալ:

Ռազմավարական անցում. ԶՆ1-ի ներքո ԱՄՆ ՄԶԳ-ն կխթանի Հայաստանի ժողովրդավարական անցումը՝ ընդլայնելով Առաքելության մասնակցությունը մունիցիպալ կարողությունների զարգացման ավելի սահմանափակ կենտրոնացումից և թիրախային ազգային մակարդակի բարեփոխումներից՝ դեպի համակարգային կառավարման վերափոխման իրականացմանն ուղղված ինչպես ազգային, այնպես էլ ենթազգային կարողությունների ձևավորում: Հաշվետվողականությունն ամրապնդելու նպատակով ԱՄՆ ՄԶԳ-ն կկիրառի հաշվետվողականության համակարգերի մոտեցում, որը ձգտում է ինչպես ինստիտուցիոնալացնել հանրային հատվածի հաշվետվողականությունը, այնպես էլ ձևավորել հասարակության ակնկալիքներն ու նորմերը ժողովրդավարական կառավարման, հակակոռուպցիոն գործունեության և օրենքի գերիշխանության նկատմամբ: ԱՄՆ ՄԶԳ-ն կսատարի օրենսդրության ամրապնդման ավելի ընդարձակ ծրագիր և կրկին կաշխատի օրենքի գերիշխանության ոլորտում՝ կենտրոնանալով դատական համակարգի անկախության շուրջ: Ժողովրդավարական համախմբման և անբարենպաստ ազդեցությանը դիմակայելու նպատակով ԱՄՆ ՄԶԳ-ն կմշակի ավելի հարմարեցված ծրագրեր, որոնց նպատակն է բարձրացնել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և անկախ լրատվամիջոցների ֆինանսական և կազմակերպական կայունությունը, նպաստել քաղաքացիների ներառական մասնակցությանը հանրային քաղաքականության ձևակերպման և իրականացման ձևավորմանը, ինչպես նաև քաղաքացիական կրթության և մեդիագրագիտության ինստիտուցիոնալացմանը:

Հայաստանի կառավարության հետ մեր հարաբերությունների վերահիմնավորումը. ԶՆ 1- ը համընկնում է ՀՀ Կառավարության սահմանած գերակայությունների հետ, որոնք նախանշված են 2050 թ.-ի Ազգային վերափոխման ռազմավարության և ոլորտային ռազմավարությունների մեջ, ներառյալ հակակոռուպցիոն ոլորտը, դատահիրավական բարեփոխումները, պետական կառավարումը, պետական ֆինանսական կառավարումը և տարածքային զարգացումը: ԱՄՆ ՄԶԳ-ն կհենվի ՀՀ կառավարության հետ հաստատված ամուր հարաբերությունների վրա և կամրապնդի և կխթանի նրանց հանձնառությունն ու աշխատանքը՝ երկրի կողմից ղեկավարվող մոդելների և համակարգերի միջոցով: Մասնավորապես, ԱՄՆ ՄԶԳ-ն կխթանի տեղական գործընկերների հաձնառությունները՝ ուղղված բարեփոխումների առաջխաղացմանը հաշվետվողականության համակարգի մոտեցման միջոցով՝ կարողություններ զարգացնելով և հնարավորություններ ստեղծելով կառավարության, քաղաքացիական հասարակության, քաղաքացիների և, անհրաժեշտության դեպքում, մասնավոր հատվածի շահագրգիռ կողմերի համար՝ կառուցողական ձևով նպաստելու քաղաքականության ձևավորմանը և բարեփոխումների իրականացմանը: Անհրաժեշտության դեպքում Առաքելությունը կներառի պետական և տեղական բյուջեների հատկացումների աստիճանական ավելացման պայմաններ՝ ԱՄՆ ՄԶԳ ի աջակցությունը համապատասխանեցնելու և ընդունող երկրի հաստատությունների հետ փոխըմբռնման հուշագրերի կիրառման համար՝ բարեփոխումների մասով նրանց հետաքրքրվածությունն ու աջակցությունը ամրապնդելու համար: ԱՄՆ ՄԶԳ-ն նաև կխթանի տեղական գործընկերների կողմից իրենց զարգացումը սահմանելու և խթանելու ունակությունը՝ «Տեղական աշխատանքներ» ծրագրի և տեղական գործընկերների հետ ուղղակի համագործակցության միջոցով: Ելնելով COVID-19- ին Հայաստանի արձագանքից քաղված դասերից ՝ԱՄՆ ՄԶԳ-ն կբարելավի ազգային և տեղական ինքնակառավարման մարմինների գործընկերների աղետների և համաճարակների արձագանքման կարողությունները և կբարձրացնի աղետների կանխարգելման, պատրաստականության և արձագանքման իրազեկությունը՝ քաղաքացիական հասարակությանը, քաղաքացիական կրթությանը, լրատվամիջոցների զարգացմանը և խոցելի բնակչությանը տրամադրվող աջակցության միջոցով:

Ինքնապահովման ֆինանսավորում. *ԶՆ* 1-ի ներքո կոռուպցիայի կանխարգելման խթանման, կառավարության հիմնական հաշվետվողականության ինստիտուտների ամրապնդման, ինչպիսիք են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը և Աուդիտի բարձրագույն մարմինը, պետական կառավարման բարեփոխումներին աջակցությունը և պետական ֆինանսական կառավարման մեջ վերահսկողության և քաղաքացիների ներգրավվածության աճի կարևորումը կբարելավի ներքին ռեսուրսների արդյունավետ, արտադրողական և թափանցիկ օգտագործումը՝ ուղղված Հայաստանի սեփական զարգացման ֆինանսավորման կարողությունների ամրապնդմանը: Բացի այդ, ԶՆ 1-ը կնպաստի քաղաքացիական հասարակության հատվածի և անկախ լրատվամիջոցների ֆինանսական կայունությանը ՝բարելավելու նրանց հանձնառությունն ու կարողությունները՝ որպես կառավարության ստուգման արդյունավետ և անկախ մեխանիզմ գործելու և ՀՀ կառավարության հետ արդյունավետ ձևով համագործակցելու նպատակով՝ անբարենպաստ ազդեցությանը դիմակայելու նպատակով:

Մասնավոր հատվածի ներառում. ԶՆ-ի հիմքում ընկած հաշվետվողականության համակարգի հիման վրա ԱՄՆ ՄԶԳ-ն հնարավորություն կտա մասնավոր հատվածին որպես շահագրգիռ կողմ ներգրավվելու կառավարության և քաղաքացիական հասարակության հետ համագործակցության գործընթացներում՝ ժողովրդավարական բարեփոխումների խթանման նպատակով: Մասնավոր հատվածի ներկայացուցիչների համար այս ԶՆ-ին նպաստող գործունեություն ծավալելու խթանն առավել ակնհայտ է կոռուպցիայի կանխարգելման և արդարադատության ոլորտներում, քանի որ ավելի ամուր և կանխատեսելի օրենքի գերիշխանությունը բիզնեսի և ներդրումների համար բարենպաստ միջավայրի բարելավման կարևոր հիմնաքարերից մեկն է:

Դիմակայում անբարենպաստ ազդեցությանը. ԶՆ-1-ը կդիմակայի անբարենպաստ ազդեցություններին՝ ամրապնդելով օրենքի գերիշխանությունն ու քաղաքական մրցակցությունը, կառուցելով քաղաքացիական հասարակության կայունությունը, հակադրվելով ավտորիտար նյութերին քաղաքացիական կրթության միջոցով, խթանելով մեդիագրագիտությունն ու անկախ լրատվամիջոցների ֆինանսական կենսունակությունը և ներդրում կատարելով երիտասարդության դրական զարգացման սկզբունքներին:

Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքար. ԶՆ1- ներքո ԱՄՆ ՄԶԳ-ն կինտեգրի ՄԹՊ-ն հաշվետվողական կառավարման և քաղաքացիների ներգրավման միջոցառումներում՝ օգնելու համար Հայաստանին անդրադառնալ բացերին, որոնք ի հայտ են եկել Պետդեպարտամենտի 2020թ. ՄԹ զեկույցի 2րդ վերահսկվող խմբում Հայաստանի վարկանիշի նվազման արդյունքում: Այս գործողությունները կհամակարգվեն միջգերատեսչական եղանակից և կթիրախավորվեն սահմանված կարիքների հիման վրա և կառավարության և քաղաքացիական հասարակության շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունների արդյունքում: Կառավարման առումով միջամտությունները կարող են ներառել ՄԹ քաղաքականության թիրախային զարգացում և հաղորդակցության ոլորտի աջակցություն առանցքային նախարարություններին և խորհրդարանական հանձնաժողովներին, սոցիալական ծառայություններ՝ թրաֆիքինգի զոհերին պրոակտիվ ձևով բացահայտելու նպատակով, և ՄԹ ոլորտի վերաբերյալ կարողությունների բարելավում և իրազեկության ընդհանուր ձևավորում ոլորտի հիմնական դերակատարների և տեղի ինքնակառավարման մարմինների շրջանում: Միաժամանակ, քաղաքացիական հասարակության և ԶԼՄ-ների զարգացման գործողությունները հստակ հնարավորություններ են ստեղծում ավելի ուժեղ հասարակական վերահսկողության և ՄԹՊ- ի հիմնախնդիրների ընդհանուր ընկալման համար հասարակության կողմից, իսկ քաղաքացիական կրթությանն ուղղված խթանիչ գործողությունները և խոցելի խմբերի հզորացումը հնարավորություն կտան ներգրավելու թրաֆիքինգի վտանգի տակ գտնվող երեխաներին և երիտասարդներին:

Դոնորների համապատասխան աջակցություն. Թավշյա հեղափոխությունից հետո Հայաստանում դոնորների աջակցության և պարտավորությունների հոսք գրանցեց ժողովրդավարության և կառավարման տարբեր ոլորտներում: Դրանք ներառում են ինչպես Հայաստանում ավանդաբար ակտիվ դոնոր կազմակերպություններին, ինչպիսիք են Եվրամիությունը (ԵՄ), և նրա անդամ երկրները, ՄԱԿ-ի կազմակերպությունները, Համաշխարհային բանկը (ՀԲ) և Ասիական զարգացման բանկը, ինչպես նաև Հայաստանի

համար համեմատաբար նոր կազմակերպություններ, ինչպիսիք են Մեծ Բրիտանիայի Արտաքին գործերի և համագործակցության վարչությունը (FCO) իր Լավ կառավարման հիմնադրամի և Շվեդիայի միջազգային զարգացման համագործակցության գործակալությունը (SIDA): ԱՄՆ ՄԶԳ-ի ակտիվ մասնակցությունը դոնորների համակարգման ջանքերին և իր ծրագրերի ձևավորման գործում համապարփակ խորհրդատվությունները կապահովեն, որ այս ԶՆ-ի շրջանակներում իրականացվող միջամտությունները ռազմավարական դիրքավորում ունենան այլ դոնորական աջակցության համատեքստում: Մասնավորապես, ԱՄՆ ՄԶԳ-ն կօգտագործի ԵՄ բյուջետային աջակցությունը և տեխնիկական օժանդակությունը `օրենքի գերիշխանությունն ու հակակոռուպցիոն բարեփոխումները առաջ մղելու համար, կհամապատասխանեցնի խորհրդարանական ամրապնդման ջանքերը FCO-ի և SIDA- ի հետ, իսկ Համաշխարհային բանկի հետ կհամակարգի պետական կառավարման և ֆինանսական կառավարման ամրապնդման աջակցությունը:

Կլիմայի ռիսկի կառավարման սքրինինգ ԿՌԿ սքրինինգը ցածր ռիսկայնության ցուցանիշ է բացահայտել ԶՆ1-ի բոլոր միջոցառումների համար: ԱՄՆ ՄԶԳ-ն որպես կառավարելի է գնահատել այս ռիսկերը և համապատասխանեցման միջոցները:

Կարևոր ենթադրություններ և ռիսկեր

ԿԱՐԵՎՈՐ ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՌԻՍԿԵՐ
• Կառավարության քաղաքական կամքը և ժողովրդավարական բարեփոխումներին հասարակության աջակցությունը ռազմավարության իրագործման ընթացքում էապես չեն նվազում: • Քաղաքացիական ներգրավվածությունը շարունակվում է ` անկախ բարեփոխումների տեմպերից, և ՔՀԿ-ները ակտիվորեն նպաստում են հակակոռուպցիոն և օրենքի գերակայության ջանքերի ինստիտուցիոնալացմանը: • 2023 թվականի խորհրդարանական, ինչպես նաև 2021 և 2022 տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները լայնորեն ճանաչվում են որպես ազատ և արդար, իսկ ընտրված քաղաքական ուժերը վայելում են հասարակության աջակցությունը:	• Բարեփոխումների ազդակը կարող է դանդաղել 1) կառավարության ղեկավար պաշտոնների հոսունության բարձր տեմպերի, 2) արմատավորված բյուրոկրատների մոտիվացիայի բացակայության և 3) հակահեղափոխական ուժերի կողմից իշխանությունը ապալեգիտիմացնելու և ապակայունացնելու հաջող փորձերի պատճառով: • Կառավարության ժողովրդականության անկման դեպքում ՀՀ աջակցությունը հաշվետվողականության բարեփոխումներին և գործադիր իշխանության վերահսկմանը կարող է թուլանալ `հանգեցնելով ժողովրդավարական հետընթացի: • COVID-19-ի հաջորդող Հայաստանի տնտեսական վերականգնումը կարող է խաթարել կառավարման բարեփոխումների առաջնահերթությունը:

• Հայաստանի կառավարման համակարգերի ամրապնդումը շարունակում է առաջնահերթություն լինել ԱՄՆ-ի և ԵՄ-ի օժանդակության և գործընկերության համար: • COVID-19 արձագանքման առաջնահերթությունները չեն խարխլում ժողովրդավարական բարեփոխումների նկատմամբ ՀՀ Կառավարության քաղաքական կամքը:	• Անբարենպաստ արտաքին ազդեցությունը կարող է աճել և խաթարել Հայաստանի ժողովրդավարական ձեռքբերումները և/կամ երկրի քաղաքական կայունությունը: • Հայաստանի աշխարհաքաղաքական իրավիճակը վատթարանում է՝ վերածվելով Լեռնային Ղարաբաղի շուրջ շարունակական հակամարտության Ադրբեջանի հետ:

ՁՆ 1. Ժողովրդավարական անցման խթանում

ՄԱ 1.1. Արդյունավետ և հաշվետվողական կառավարման ինստիտուցիոնալացում

1.1.1. Օրենքի գերիշխանության ամրապնդում
1.1.2. Քաղաքական ներկայացուցչության և մրցակցության ամրապնդում
1.1.3. Թիրախային պոխակերպումային բարեփոխումների կարողությունների և հանձնառության ամրապնդում

ՄԱ 1.2. Քաղաքացիների ներգրավման ավելացում հանուն ժողովրդավարական համախմբման

1.2.1. Քաղաքացիական և քաղաքական մասնակցության ավելացում
1.2.2. Քաղաքացիական հասարակության կայունության բարելավում
1.2.3. ՁԼՄ-ների բարեվարքության բարելավում
1.2.4. Կանանց, երեխաների և խոցելի խմբերի գործելու և բարձրաձայնելու իրավունքների և հնարավորությունների ընդլայնում

ԽԱՉՎՈՂ ԹԵՄԱՆԵՐ . Դիմակայունության բարձրացում խաղաղության կառուցման, չարամիտ ազդեցության հակազդումը ուժեղացնելու և աղետներին արձագանքելու բարելավման միջոցով

ՄՆ 1.1: Արդյունավետ և հաշվետվողական կառավարման ինստիտուցիոնալացում
Ինչպես է ՄԱ1.1-ը նպաստում ՁՆ-ին.

ԵԹԵ ամրապնդվի օրենքի գերիշխանությունը, ԵԹԵ ամրապնդվեն քաղաքական ներկայացուցչությունն ու մրցակցությունը, ԵԹԵ ամրապնդվեն նպատակային բարեփոխումների կարողությունն ու հանձնառությունները, ԱՊԱ կինստիտուցիոնալացվեն արդյունավետ և հաշվետու կառավարումը:

Օրենքի գերիշխանության մշակույթ սերմանելու համար ԱՄՆ ՄԶԳ-ն կաջակցի ՀՀ Կառավարության գերագույն նպատակին, այն է՝ արմատախիլ անել կոռուպցիան, ամրապնդել հաշվետվողականության համակարգերը, ինստիտուցիոնալացնել կոռուպցիայի կանխարգելման միջոցառումները, խթանել անհանդուրժողականությունը կոռուպցիոն գործողությունների նկատմամբ, ամրապնդել կառավարման և հաշվետվողականության բարելավման հանրային պահանջը, ինչպես նաև խթանել դատական անկախությունն ու

արդյունավետությունը: ԱՄՆ ՄԶԳ-ն կամրապնդի ժողովրդավարական զսպումներն ու հակակշիռները՝ քաղաքական հաշվետվողականության ինստիտուտների ամրապնդման հիման վրա, ներառյալ խորհրդարանը, քաղաքական կուսակցությունները և ընտրական համակարգերը, և կխթանի քաղաքացիների ավելի լայն ներգրավվածությունը, մասնավորապես կանանց, Երևանից դուրս բնակվող քաղաքացիների և այլ մարգինալացված խմբերի, ներառական քաղաքական մասնակցությունն ու մրցակցությունը խթանելու նպատակով: Բացի այդ, սահմանելով փոփոխությունները ի կատար ածողներին, մասնավորապես երիտասարդ ի հայտ եկող առաջնորդներին, ինչպես նաև հաստատությունները, որոնք Հայաստանի քաղաքական անցման այս որոշիչ ժամանակաշրջանում բաց են իմաստալի փոփոխությունների համար, ԱՄՆ ՄԶԳ-ն կուժեղացնի տեղի շահագրգիռ կողմերի կարողությունները և հանձնառությունը՝ ուղղված այն թիրախային բարեփոխումների և գործընթացների առաջխաղացմանը, որոնք փոխակերպումային կլինեն ժողովրդավարական կառավարումը տարբեր ոլորտներում համախմբելու նպատակով:

Սա ենթադրում է աշխատանք հայաստանյան շահագրգիռ կողմերի հետ՝ նպատակային ոլորտները բացահայտելու և դրանց աջակցելու համար, ինչպիսիք են՝ պետական ֆինանսական կառավարման և պետական կառավարման բարեփոխումները, ենթազգային մակարդակի կառավարման ինստիտուտների ուժեղացում և կենտրոնացում Երևանից դուրս, որտեղ աղքատության մակարդակն ու մարգինալացումը ամենաբարձրն են, բարեփոխումների ռազմավարական հաղորդակցության և ապատեղեկատվության դեմ պայքարի համար հանրային իրազեկման կարողությունների ամրապնդում, ինչպես նաև արտակարգ իրավիճակների և համաճարակային պատրաստվածության և արձագանքման հնարավորությունները:

ԶՆ 1.2 Քաղաքացիների ներգրավման ավելացում հանուն ժողովրդավարական համախմբման
Ինչպես է ՄԱ1.1-ը նպաստում ԶՆ-ին.

ԵԹԵ ավելանա քաղաքացիական և քաղաքական մասնակցությունը, ԵԹԵ բարելավվի քաղաքացիական հասարակության կայունությունը, ԵԹԵ բարձրացվի ԶԼՄ-ների բարեվարքությունը, և ԵԹԵ կանանց, երիտասարդության և խոցելի խմբերի գործելու և բարձրաձայնելու հնարավորություններն ու իրավունները, ԱՊԱ քաղաքացիների ներգրավվածությունը ժողովրդավարական համախմբման համար կբարձրանա: ԵԹԵ քաղաքացիական և քաղաքական մասնակցությունը մեծանում է, ԵԹԵ բարելավվում է քաղաքացիական հասարակության կայունությունը, ԵԹԵ բարձրանում է լրատվամիջոցների բարեվարքությունը, և եթե կանանց, երիտասարդության և խոցելի խմբերի ձայնն ու գործակալությունը ուժեղանան, ԱՊԱ կավելանա քաղաքացիների մասնակցությունը հանուն ժողովրդավարական համախմբման:

ԱՄՆ ՄԶԳ-ն կնպաստի անխտրական և ներառական զարգացմանը և հնարավորություն կտա քաղաքացիներին, մասնավորապես՝ կանանց, երիտասարդներին և բնակչության ավանդաբար մարգինալացված խմբերին արդյունավետորեն ներգրավվել և մասնակցել իրենց երկրի կառավարմանը ներառական քաղաքական գործընթացների, քաղաքացիական

կրթության, լրատվամիջոցների և քաղաքացիական հասարակության ամրապնդմանն ուղղված գործողությունների միջոցով, ինչպես նաև նպատակային աջակցություն կցուցաբերի ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ խտրականությունը կանխելու և հատուկ մարգինալացված խմբերի՝ մասնավորապես հաշմանդամություն ունեցող անձանց և մարդկանց թրաֆիքինգի ռիսկային գոտում գտնվողների իրավունքներն ու հնարավորությունները ընդլայնելու և իրավունքներ ընձեռելու համար: ԱՄՆ ՄԶԳ-ն կխթանի բարեվարքության, հաշվետվողականության և քաղաքացիության արժեքների և սկզբունքների հասարակական ընկալումը և հակակշիռ կստեղծի հակաարևմտյան, ավտորիտար և պետականակենտրոն տեքստերին՝ քաղաքացիական կրթության նախաձեռնությունների միջոցով՝ օգտագործելով ինչպես պաշտոնական, այնպես էլ ոչ ֆորմալ կրթական հաստատությունները: ԱՄՆ ՄԶԳ-ն կամրապնդի ՔՀԿ-ների՝ քաղաքացիներին ներգրավելու և Կառավարության հետ կառուցողական համագործակցություն ծավալելու կարողությունները՝ միևնույն ժամանակ անդրադառնալով ոլորտի կազմակերպական և ֆինանսական կայունությանը: Առաքելությունը միտումնավոր ընդգծելու է քաղաքացիական հասարակության աջակցման ծրագրերի շուրջ նոր և (կամ) թերօգտագործված գործընկերների հետ աշխատանքը: Անբարենպաստ ազդեցության վերաբերյալ քաղաքացիների իրազեկվածության և դիմակայման խթանման նպատակով ԱՄՆ ՄԶԳ-ն կամրապնդի լրատվամիջոցների բարեվարքությունը՝ բարելավելով տեղեկատվության որակը և ճշգրտությունը, խթանելով մեդիագրագիտությունը և ընդլայնելով աջակցությունը՝ լրատվամիջոցներում իրավական կարգավորման, ֆինանսական կայունության և մասնագիտական կայունության խնդիրները լուծելու համար: ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից քաղաքացիական հասարակության և անկախ լրատվական կազմակերպությունների ֆինանսական կայունության խթանման շեշտադրումը մասնավոր հատվածի ներգրավման և շուկայական մոտեցումների կիրառման նպատակային հնարավորություն է: Այն նաև նպաստում է երկրի ինքնապահովման ֆինանսավորմանը, քանի որ այդ մոտեցումը հնարավորություն կտա այս հաստատություններին ամրապնդել իրենց հանձնառությունները և կարողությունը՝ գործելու որպես կառավարության արդյունավետ և անկախ վերահսկող և կառուցողական եղանակով համագործակցելու ՀՀ կառավարության հետ՝ անբարենպաստ ազդեցությանը դիմակայելու նպատակով՝ միաժամանակ աստիճանաբար նվազեցնելով նրանց կախվածությունը դոնորների աջակցությունից: ԱՄՆ ՄԶԳ աջակցությունը ՄԱ 1.2- ի միջոցով կօժանդակի ԱՆԳ- ի նպատակային ջանքերին՝ ուղղված քաղաքացիական ակտիվության պահպանմանը և քաղաքացիների արձագանքող կառավարման ամրապնդմանը «Եկեք մի բան անենք» արշավի միջոցով:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿ 2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ

Զարգացման վարկածի հայտարարում. ԵԹԵ տնտեսական կառավարումն ամրապնդվի, սանձազերծվի մրցակցային ոլորտների ներուժը, իսկ բնական ռեսուրսներն ավելի լավ կառավարվեն, ԱՊԱ կբարելավվեն տնտեսական անվտանգությունն ու աճը, Հայաստանը ավելի դիմացկուն կդառնա անբարենպաստ ազդեցությունների նկատմամբ, և ավելի շատ քաղաքացիներ կմասնակցեն և օգուտ կքաղեն տնտեսությունից:

Տնտեսական անվտանգությունն ընդգրկում է աճի, կայունության և դիմակայունության առանցքային հիմնասյուները, որոնք երեքն էլ կարևոր են Հայաստանի՝ դեպի ինքնապահովում

ճանապարհի առաջխաղացման համար: ՀՀ Կառավարությունը նաև ազդարարել է, որ տնտեսական աճը և տնտեսական անվտանգությունը քաղաքականության կարևոր առաջնահերթություններն են: ԶՆ 2-ը կբարելավի Հայաստանի տնտեսական անվտանգությունը՝ աջակցելով կենսունակ և կայուն տնտեսության զարգացմանը՝ հայաստանցիների համար և հայաստանցիների կողմից: Մինչ COVID-19- ի բռնկումը Հայաստանի տնտեսական աճի հետագիծը դրական էր, ինչպես նաև կանխատեսվում էր ՀՆԱ-ի կայուն աճ: ՀՀ կառավարությունը սկսում էր իրականացնել հարկաբյուջետային քաղաքականություն՝ ուղղված պակասուրդի կրճատմանը և հարկերի եկամուտների հավաքագրման ավելացմանը: Կենտրոնական կառավարության պարտքը՝ որպես ՀՆԱ-ի մասնաբաժին նվազում էր, իսկ փոխարժեքը կայուն էր: Հարցումները փաստում էիրն կառավարությանը ժողովրդի համատարած աջակցության մասին, միաժամանակ կարևորելով քաղաքացիների մեծ ակնկալիքները՝ տեսնելու 2018 թավշյա հեղափոխության տնտեսական օգուտները:

Չնայած այս լուսավոր կետերին, Հայաստանը բախվում է տնտեսական զարգացման բազմաթիվ մարտահրավերների, որոնք COVID-19 համավարակի պատճառով միայն սրվել են: Երկրի փոքր, մեկուսացված շուկան սահմանափակում է մասշտաբային տնտեսություն ձեռք բերելու և ներդրումներ ներգրավելու Հայաստանի կարողությունը: Անհավասարության ու գործազրկության ցուցանիշները շարունակում են բարձր մնալ. գործազրկության ազգային մակարդակը շուրջ 20 տոկոս է: Երիտասարդների շրջանում գործազրկությունն աշխարհում ամենաբարձր ցուցանիշներից մեկն ունի՝ մոտ 40 տոկոս, իսկ մասնավոր հատվածը շարունակում է կաշկանդված լինել մարդկային կապիտալի պակասուրդի պատճառով: COVID-19- ի հետ կապված վաղ կանխատեսումները ենթադրում են, որ Հայաստանը տուժելու է արտաքին եկամտի երեք հիմնական աղբյուրների՝ տրանսֆերտների, ապրանքների գների և զբոսաշրջության անկումից:

ԶՆ 2-ը կշտկի J2SR- ի կատարողականի միջոցառումների նկատելի բացերը՝ Հայաստանի տնտեսական կառավարման ամրապնդման, առանցքային ոլորտների մրցունակության բարձրացման, էներգետիկ անվտանգության ավելացման և բնական պաշարների կայուն կառավարման բարելավման օժանդակության միջոցով: ԶՆ 2-ի միջոցով ԱՄՆ ՄԶԳ-ն կհամագործակցի պետական կարևոր հաստատությունների, մասնավոր հատվածի և այլ շահագրգիռ կողմերի հետ՝ բարեփոխումների միտված քաղաքական կամքի հիման վրա, և կօգտվի ներդրումային հնարավորությունների ուղղությամբ մասնավոր հատվածի կողմից ԱՄՆ Կառավարության հետ համագործակցության նկատմամբ հետաքրքրության ավելացման հնարավորությունից: ԶՆ2-ը նաև կսատարի Հայաստանի ինքնիշխանությանը՝ ամրապնդելով պետական ինստիտուտները, քաղաքականությունը, համակարգերը և հմտությունները՝ տնտեսական արդյունավետությունը բարձրացնելու համար, կխթանի էներգետիկ անկախության ավելի բարձր մակարդակ, կխթանի արտահանման կատարելագործումը և հայաստանցիների համար աշխատանքի արժեքավոր հնարավորություններ կապահովի:

ԱՄՆ ՄԶԳ-ն կհամագործակցի բազմաթիվ պետական գերատեսչությունների հետ ՝ հանուն ԶՆ-ի իրականացման: Կառավարության հիմնական գործընկերներից են փոխվարչապետերի գրասենյակները, ֆինանսների, էկոնոմիկայի, Բնապահպանության, Տարածքային

կառավարման և ենթակառուցվածքների (էներգետիկայի) նախարարությունները, Աշխատանքի և սոցիալական հարցերի, Կրթության և Բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նախարարությունները, ՀՀ կենտրոնական բանկը և Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը: ԱՄՆ ՄԶԳ-ն նաև կհամագործակցի է շահագրգիռ կողմերի ավելի լայն շրջանակի, այդ թվում՝ բիզնես ասոցիացիաների, ԱՄՆ և Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների, ինկուբատորներ և տեխնոպարկերի, բազմազգային կորպորացիաների, ինչպես նաև մասնավոր հատվածի ներդրողների, սփյուռքի, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և այլ դոնորների հետ:

ԶՆ2-ը հիմնված է բազմաթիվ գնահատականների և տվյալների աղբյուրների վրա, ներառյալ Համաշխարհային բանկի «2020 թ. Հայաստանում բիզնեսի վարում» երկրի պրոֆիլը, 2019 թ.-ի «Հայաստանի ներառական աճի դիագնոստիկան», 2020 թ.-ի Զարգացման ֆինանսական կորպորացիայի շուկայի գնահատումը, 2019 թվականին իրականացված ԵԵ Երկրի առաջընթացի տվյալների վերլուծության մշտադիտարկումը, Հայաստանի 2019 թ. Գենդերային վերլուծության զեկույցը, Կենսաբազմազանության գնահատման զեկույցի նախագիծը, ՀՀ Կառավարության ազգային և ոլորտային ռազմավարությունները, և , ի թիվս այլոց, ֆինանսական համակարգի կայունության, առևտրի և ներդրումների, տեխնոլոգիաների և էներգետիկայի վերաբերյալ երրորդ կողմերի զեկույցները:

Ռազմավարական անցում. ԶՆ 2-ի ներքո, ԱՄՆ ՄԶԳ-ն նախորդ կառավարության օրոք կաշկանդված միջավայրում գործունեությունից կանցնի տնտեսական կառավարման բարելավմանն ուղղված ջանքերի ընդլայնման՝ կենտրոնանալով պետական այնպիսի համակարգերի բարելավման վրա, որոնք մոբիլիզացնում, բաշխում և ծախսում են պետական ռեսուրսները արդյունավետ, արտադրողական և արդարացի ձևով, ինչը կնպաստի մասնավոր հատվածի աճին: ԱՄՆ ՄԶԳ-ն կընդլայնի կարողությունների զարգացման ջանքերը աճի բարձր ներուժ ունեցող հատվածներում և սերտորեն կհամագործակցի մասնավոր հատվածի հետ՝ մենաշնորհային ձեռնարկություններից կախվածությունը թուլացնելու և կայուն տնտեսական աճ խթանելու նպատակով: ԱՄՆ ՄԶԳ գործողությունների շնորհիվ կբարելավվեն մարդկային կապիտալի կարողությունները՝ ամրապնդելով կապերը մասնավոր հատվածի և ուսումնական հաստատությունների (ներառյալ՝ տեխնիկական և արհեստագործական կրթություն և ուսուցում տրամադրողների) միջև՝ աշխատաշուկայի բացերին անդրադառնալու և աշխատանքային արտագաղթը կրճատելու նպատակով: ԱՄՆ ՄԶԳ-ն կշարունակի աջակցել Հայաստանում էներգետիկ շուկայի ազատականացմանը և մրցունակությանը՝ ընդլայնելով մատակարարման բազմազանեցման, էներգարդյունավետության միջոցառումների խթանմանն ուղղված ջանքերը և խթանելով ենթակառուցվածքների ներդրումները ինչպես երկրի ներսում, այնպես էլ տարածաշրջանում: ԱՄՆ ՄԶԳ-ն նաև Արարատյան դաշտի ջրային ռեսուրսների կառավարման սահմանափակ աշխարհագրական շրջանակից անցում կկատարի երկրի ամբողջ տարածքում ջրային ավազանի և ջրային ռեսուրսների կառավարման տարածաշրջանային գործողություններին:

Հայաստանի կառավարության հետ մեր հարաբերությունների վերահիմաստավորում. ԶՆ 2-ը համընկնում է տնտեսական աճի ավելի լայն նպատակների հետ, որոնք նախանշված են ՀՀ

կառավարության 2050 թվականի Ազգային վերափոխման ռազմավարության և ոլորտային ռազմավարությունների մեջ, ներառյալ գյուղատնտեսությունը, զբոսաշրջությունը, բարձր տեխնոլոգիաները, ջրային ռեսուրսների կառավարումը, էներգետիկան և պետական ֆինանսների կառավարումը: ԱՄՆ ՄԶԳ-ն կհենվի այս ամուր հարաբերությունների վրա և կնպաստի ՀՀ կառավարության և մասնավոր հատվածի միջև երկխոսությանը՝ պաշտոնական խորհրդատվական գործընթացների ինստիտուցիոնալացման և ներդրումների ապահովման համար: ԱՄՆ ՄԶԳ-ն նաև կաջակցի ներդրումներ ներգրավելու և նպատակային հատվածներում պետական-մասնավոր գործընկերության հնարավորությունները ուսումնասիրելու ՀՀ Կառավարության ջանքերին, ինչը նպաստում է ինքնապահովման նպատակին: ԶՆ 2-ը կձևավորի կառավարության կողմից մասնավոր հատվածի հետ փոխգործակցության կարևորության ընկալումը, ինչը կհանգեցնի թափանցիկ և համակարգված գործընթացների ինտեգրմանը, որոնք արտացոլում են մասնավոր հատվածի շահերն ու պահանջները: ԱՄՆ ՄԶԳ-ն կօգտագործի ամուր հարաբերությունները, որոնք տեղական անձնակազմը կառուցել է իր գործընկերների հետ և կբարելավի կառավարության կարողությունները՝ ուղղված տնտեսական քաղաքականության մշակմանը և իրականացմանը՝ այդպիսով աջակցելով Հայաստանի անցմանը փխրուն տնտեսությունից ավելի կայուն տնտեսության: ԱՄՆ ՄԶԳ-ն կքննարկի տարբեր եղանակներ, ինչպիսիք են քաղաքականության նախապայմաններով Կառավարությունից կառավարություն (G2G) համաձայնագրերը և Փոխըմբռնման հուշագրերը համապատասխան պետական կառույցների հետ, որոնք նախանշում են զարգացման ծրագրերը, ընդհանուր նպատակները և կառավարման հիմնական ուղենիշները:

Ինքնապահովման ֆինանսավորում. ԶՆ 2-ի ներքո, ԱՄՆ ՄԶԳ-ն կիրականացնի Գործակալության ԻՖ շրջանակին համապատասխանեցված գործողություններ՝ մասնավոր ներդրումների համար միջավայրի բարելավման, պետական ֆինանսների կառավարման համակարգերի ամրապնդման, լիարժեք գործող ֆինանսական շուկաների աջակցման և ներքին ռեսուրսների մոբիլիզացման նպատակով: Սա ներառում է պետական և մասնավոր եկամուտների արդյունավետ հավաքագրման խթանում՝ հաշվի առնելով մասնավոր հատվածի համար նվազագույն ծախսերը և տնտեսության նվազագույն խեղաթյուրումները: Այն նաև կենտրոնանալու է պետական ֆինանսական կառավարման ոլորտում ՀՀ կառավարության արդյունավետության և արտադրողականության բարձրացման, կարգավորիչ շրջանակների և ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների ամրապնդման, բյուջեների ձևավորման և կատարման, ինչպես նաև գնումների և ակտիվների կառավարման շուրջ: Այս ԶՆ շրջանակներում իրականացվող աշխատանքները կներառեն նաև ֆինանսավորման նորարարական գործիքների և մեխանիզմների կիրառում, այդ թվում՝ Զարգացման ֆինանսական կորպորացիայի (ԶՖԿ) կողմից առաջարկվող միջոցների՝ որպես ռիսկի մեղմման և ներդրումները ծախսարդյունավետ և արդյունավետ դարձնելու միջոց:

Մասնավոր հատվածի ներգրավում. DO 2-ի ներքո աշխատանք կիրականացվի մասնավոր հատվածի և ՀՀ Կառավարության հետ՝ որպես հիմնական շահագրգիռ կողմեր՝ ավելի արդյունավետ տնտեսական կառավարումը խթանելու և մասնավոր և պետական հատվածի ընդհանուր գերակայությունները ինտեգրելու նպատակով: ԱՄՆ ՄԶԳ-ն նախկինում կիրարկել է մասնավոր և հանրային ռեսուրսներ և շուկայական մոտեցումներ ՏՀՏ և ջրային ռեսուրսների

ոլորտներում: Անցյալի հաջողությունների հիման վրա ԱՄՆ ՄԶԳ-ն կօգտագործի իր ուժը՝ խթանելու մասնավոր հատվածի կողմից ղեկավարվող զարգացումը՝ միաժամանակ խթանելով ընդունող երկրի սեփականության զգացումը տնտեսական վերափոխման մեծ ներուժ ունեցող տարբեր ոլորտներում: Սա կարող է ներառել գործընկերության այնպիսի ձևեր, ինչպիսիք են Գլոբալ զարգացման դաշինքները (ԳԶԴ) և ԶՖԿ գործիքների և մեխանիզմների օգտագործումը:

Անբարենպաստ ազդեցության դիմագրավում. Այս ԶՆ շրջանակներում գործողությունները կամրապնդեն տնտեսական դիմադրողականությունը՝ բազմազանեցնելով արտահանման շուկան և շեշտը դնելով բարձրարժեք, ցածր կշիռ ունեցող արտադրանքի վրա, որոնց համար ավելի քիչ խոչընդոտներ կան երկրի տրանսպորտային և ենթակառուցվածքային մարտահրավերների առումով: Գործողությունները նպատակ ունեն նաև նվազեցնել շահարկումների նկատմամբ ՀՀ կառավարության և մասնավոր հատվածի ընկալունակությունը և նվազեցնել կախվածությունը էներգիայի արտաքին աղբյուրներից՝ էլեկտրաէներգիայի ներքին արտադրության (օրինակ՝ վերականգնվող աղբյուրների խթանման և էներգարդյունավետության միջոցառումների միջոցով) և էլեկտրաէներգիայի տարածաշրջանային ինտեգրման միջոցով: ԶՆ 2-ի ներքո իրականացվող գործողությունները կնպաստեն թափանցիկ իրավական և կարգավորիչ մոտեցումների ներառմանը և իրականացմանը, որոնք համահունչ են արևմտյան չափանիշներին և գրավիչ են ներդրողների համար: Առաքելությունը կքննարկի նաև կիբերդրույթների ներառումը ծրագրերում, որոնք նպաստում են տվյալների հավաքագրմանը, կապի բարելավմանը և նոր տեխնոլոգիաների ինտեգրմանը:

Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքար. ԶՆ2-ի համաձայն, ԱՄՆ ՄԶԳ-ն ինտեգրելու է ՄԹՊ- ը իր տնտեսական կառավարման և մրցակցային գործողություններում՝ ի պատասխան Պետության 2020 թվականի ՄԹՊ հաշվետվության առաջնահերթ առաջարկությունների: Տնտեսական կառավարման տեսանկյունից, միջամտությունները կարող են ներառել իրականացնող գործընկերներին և շահառուներին իրազեկում և ուսուցում/վերապատրաստում, որոնք աշխատում են թրաֆիքինգի նկատմամբ զգայուն ոլորտներում: ԱՄՆ ՄԶԳ աշխատուժի զարգացման ծրագրերը նաև կդիտարկեն ՄԹՊ լավագույն փորձը իրավական և կարգավորիչ շրջանակներում ներառումը և թրաֆիքինգից նկատմամբ խոցելի երիտասարդներին աջակցության հնարավորությունները:

Համապատասխան դոնորական աջակցություն. Թավշյա հեղափոխությունից հետո ավելացավ Հայաստանում տնտեսական աճի նախաձեռնություններին աջակցող դոնորների թիվը: Ընթացիկ դոնորներն են Եվրամիությունը, նրա անդամ երկրները, Համաշխարհային բանկը, Ասիական զարգացման բանկը (ԱԶԲ), Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը, Արժույթի միջազգային հիմնադրամը և KfW զարգացման ֆինանսական կորպորացիան: Շվեդիայի միջազգային զարգացման գործակալությունը, ինչպես նաև այ նոր դոնոր կազմակերպություններ ևս սկսել են աշխատել Հայաստանում: ԱՄՆ ՄԶԳ-ն ակտիվորեն մասնակցում է դոնորների համակարգման ջանքերին և կապահովի, որ սույն ԶՆ-ի ներքո իրականացվող միջամտությունները ռազմավարական տեսակետից տեղակայվեն դոնորական այլ աջակցության համատեքստում: Մասնավորապես, ԱՄՆ ՄԶԳ-ն կանխատեսում է Համաշխարհային բանկի կողմից Հայաստանին տրամադրվող վարկերի

կիրառում, մասնավորապես՝ ենթակառուցվածքների (ներառյալ ապարատային համակարգեր), որոնք համահունչ են սույն ԶՆ-ի ներքո տեխնիկական աջակցության ջանքերին (այսինքն՝ զբոսաշրջության ոլորտին): ԱՄՆ ՄԶԳ-ն նաև ջանքերը կհամապատասխանեցնի KfW- ի և ԱԶԲ-ի կողմից էներգիայի և ջրի ոլորտներին տրամադրված ենթակառուցվածքային աջակցությանը:

Կլիմայի ռիսկերի կառավարման սքրինինգ. ԿՌԿ սքրինինգի միջոցով վեր հանվեց ԶՆ 2 միջամտությունների մի քանի ռիսկ: Չափավոր ռիսկեր են բացահայտվել 2.2.1 Բազմազան շուկաների հասանելիության բարելավում և 2.2.2 Արտահանման կատարելագործման աճ Ենթա-ՄԱ-երի համար: Սա պայմանավորված է վաղ նախազգուշացման սահմանափակ համակարգերի առկայությամբ, որոնց միջոցով ֆերմերներին տեղեկատվություն է տրամադրվում եղանակային անբարենպաստ պայմանների և գյուղատնտեսության ոլորտի՝ կլիմայի խելացի (սմարթ) փորձերի կիրառման ընդհանուր առմամբ ցածր կարողություններով: Այս խնդրի լուծման համար ԱՄՆ ՄԶԳ-ն նոր ծրագրեր մշակելիս կներառի կլիմայի, ջերմոցային գազերի (ՋԳ) նվազեցումը և կենսաբազմազանության նկատառումները, կնպաստի կլիմայի առումով խելացի (սմարթ) գյուղատնտեսական տեխնիկայի զարգացմանը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ կլիմայի ռիսկի մեղմացումը և կառավարումը կներառի նոր գործողությունների հրավերներում և գնումների և պլանավորման փաստաթղթերում: 2.3.1 Էներգետիկ անվտանգության աճ և 2.3.2 Ջրային ռեսուրսների հասանելիության ու կառավարման բարելավում ենթա-ՄԱ-ների համար ևս բացահայտվել են չափավոր վտանգներ: Դրանք ներառում են ջերմաստիճանի բարձրացման և տեղումների նվազման ռիսկերը և դրանց դերը մակերևութային և ստորգետնյա ջրային պաշարների կրճատման, հիդրոէներգետիկայի վրա բացասական ազդեցության և օդորակման և հովացման պահանջարկի մեծացման մեջ: Այս խնդրի լուծման համար ԱՄՆ ՄԶԳ-ն կխթանի կլիմայի խելացի (սմարթ) և դիմակայուն էներգետիկ և ջրային ենթակառուցվածքները, հաշվի կառնի կլիմայի փոփոխականությունը, ջերմոցային գազերի արտանետումների նվազեցումը և կենսաբազմազանության ազդեցությունը էներգետիկ և ջրային ծրագրերի պլանավորման մեջ, ինչպես նաև կխրախուսի կլիմայի փոփոխության և ջերմոցային գազերի տվյալների օգտագործումը ծրագրերի նոր հրավերներում և գնումների և պլանավորման փաստաթղթերում: ԱՄՆ ՄԶԳ-ն այս ռիսկերը և հարմարեցման միջոցառումները կառավարելի է համարում:

Առանցքային ենթադրություններ և ռիսկեր

ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՌԻՍԿԵՐ
• COVID-19- ի հետ կապված տնտեսական ցնցումները հանդարտվում են, իսկ թիրախային տնտեսական հատվածները կայունանում են երկու տարվա ընթացքում:	• Գործազրկության կայուն բարձր տեմպերը հանգեցնում են Կառավարության նկատմամբ հասարակության վստահության կորստի: • COVID-19- ի հետ կապված տնտեսական ցնցումները մեծացնում են Հայաստանի

• ՀՀ Կառավարությունը շարունակում է առաջնահերթությունը տալ տնտեսական աճի, վերականգնման և խթանման ջանքերին: • Հայաստանի տնտեսության COVID-19-ից հետո վերականգնումը չի խաթարում բնական ռեսուրսների կառավարման և էներգիայի դիվերսիֆիկացման առաջնահերթությունը: • Թիրախային տնտեսական հատվածներում աճը հանգեցնում է երիտասարդների ավելի մեծ զբաղվածության: • Մասնավոր հատվածն խթանում է ներդրումները վերականգնվող էներգիայի ոլորտում: • Կառավարությունը և մասնավոր հատվածը պատրաստ են համագործակցել միմյանց և ԱՄՆ ՄԶԳ-ի հետ՝ մասնավոր հատվածի աճի համար նպաստավոր միջավայր ստեղծելու նպատակով:	խոցելիությունը անբարենպաստ ազդեցության նկատմամբ: • Օրենքի գերիշխանության կիրառման հետևողականության բացակայությունը, քողարկված կոռուպցիան և պայմանագրերի ոչ հուսալի կատարումը, ինչը հանքարդյունաբերության ոլորտում վերջերս տեղի ունեցած տարաձայնությունների խորհրդանշական են, նպաստում են գործարար միջավայրի քայքայմանը և օտարերկրյա ուղիղ ներդրումների զսպմանը: • Անբարենպաստ ջանքերը ապալեգիտիմացնում են գործող կառավարությունը: • ՀՀ Կառավարությունն ավելի խոցելի է թիրախային հատվածներում ոչ կառուցողական ներդրումների համար: • Հայաստանի աշխարհաքաղաքական իրավիճակը վատթարանում է՝ Լեռնային Ղարաբաղի շուրջ Ադրբեջանի հետ շարունակական հակամարտության պատճառով:

ՁՆ 2. Տնտեսական անվտանգության բարելավում

ՄԱ 2.1. Տնտեսական կառավարման ամրապնդում
2.1.1. Պետական հատվածի տնտեսական առաջատարության պաշտոնականացում
2.1.2. Համապատասխան միջավայրի բարելավում մասնավոր հատվածի աճի համար
2.1.3. Արդյունավետ ներդրումների համար կապիտալի հասանելիության ապահովում

ՄԱ 2.2. Թիրախային հատվածների մրցունակության բարելավում
2.1. Տարատեսակ շուկաների հասանելիության բարելավում
2.2.2. Արտահանման կատարելագործման ավելացում
2.2.3. Շուկայի պահանջարկը բավարարելու՝ մարդկային կապիտալի կարողությունների բարելավում

ՄԱ 2.3. Բնական ռեսուրսների կայուն կառավարման բարելավում
2.3.1. Էներգետիկ անվտանգության բարելավում
2.3.2. Ջրային ռեսուրսների հասանելիության և կառավարման բարելավում

ԽԱՉՎՈՂ ԹԵՄԱՆԵՐ . Դիմակայունության բարձրացում խաղաղության կառուցման, չարամիտ ազդեցության հակազդումը ուժեղացնելու և աղետներին արձագանքելու բարելավման միջոցով

Միջանկյալ արդյունք 2.1. Տնտեսական կառավարման ամրապնդում
Ինչպե՞ս է ՄԱ 2.1-ը նպաստում է ՁՆ- ին.

ԵԹԵ պետական հատվածի տնտեսական ղեկավարումը պաշտոնական բնույթ ստանա, բարելավվի մասնավոր հատվածի աճին նպաստող միջավայրը և հասանելի դարձվի ներդրումների համար կապիտալ, ԱՊԱ կամրապնդվի տնտեսական կառավարումը:

ՄԱ 2.1-ի միջոցով ԱՄՆ ՄԶԳ-ն կամրապնդի տնտեսական կառավարումը Հայաստանում՝ աջակցելով պետական հատվածի տնտեսական առաջատարության [19] պաշտոնապես ձևավորելու և այնպիսի պայմաններ ստեղծելու ջանքերին, որոնք հասանելի են դարձնում արդյունավետ ներդրումները և հանգեցնում մասնավոր հատվածի աճի: ԱՄՆ ՄԶԳ-ն կաջակցի պետական հատվածին՝ արդյունավետ, արտադրողական և պրոդուկտիվ համակարգեր և գործընթացներ հաստատելու գործում՝ միաժամանակ զարգացնելով քաղծառայողների կարողությունները՝ աճին միտված քաղաքականություններ մշակելու և իրականացնելու համար, որոնք կայուն են և դիմակայում են անբարենպաստ օտարերկրյա ազդեցության նկատմամբ: Սա կհանգեցնի շուկայի արդյունավետության ավելացման, որակյալ հանրային ծառայությունների, ֆինանսների հասանելիության բարելավման և ներդրումների ներգրավման աճի: Ներքին ռեսուրսների մոբիլիզացման բարելավման, պետական ծախսերի արտադրողականության բարձրացման և բարձր ազդեցություն կրող ռեսուրսների ոլորտների ֆինանսների ավելացման հետ մեկտեղ՝ տնտեսական ավելի ուժեղ կառավարումը մասնավոր հատվածին հնարավորություն կտա խթանել տնտեսական աճը: ԱՄՆ ՄԶԳ-ն նաև կսատարի ներառական տնտեսական քաղաքականությանը, ըստ որի գերակայություն են հանդիսանում հայ ժողովրդի բարեկեցությունը և անվտանգությունը, ինչպես նաև առաջ կտանի ՀՀ-ում «տնտեսական հեղափոխություն» հաստատելու նպատակը, ինչը կարևոր է 2018-ին քաղաքացիների կողմից առաջնորդված քաղաքական վերափոխման ձեռքբերումները պահպանելու համար:

IR 2.1- ը կնպաստի մասնավոր հատվածի և ՀՀ կառավարության գերակայությունների համակարգային ինտեգրմանը՝ տնտեսական աճի համար պարարտ միջավայր ստեղծելու նպատակով: Ներկայիս բացը ՀՀ Կառավարության և մասնավոր հատվածի միջև խորհրդատվության ինստիտուցիոնալ մեխանիզմների բացակայությունն է: Այս մարտահրավերին անդրադառնալու և Հայաստանի տնտեսության կայունությունը խթանելու համար կառավարությունը տնտեսական քաղաքականություն մշակելիս պետք է հաշվի առնի նաև մասնավոր հատվածի շահերը: ԱՄՆ ՄԶԳ-ն համագործակցում է ՀՀ կառավարության և մասնավոր հատվածի հետ՝ խորհրդատվական հարթակներ ստեղծելու և ինստիտուցիոնալացնելու համար,որոնք կուղղորդեն կառավարությանը ազդեցիկ քաղաքականություն, օրենքներ և կանոնակարգեր մշակելու, իրականացնելու և կիրառելու

[19] Առաջատարություն՝ հաճախ ավելի նեղ իմաստով սահմանվում է որպես կառավարում. վերաբերում է կառավարությունների կողմից իրականացվող գործառույթների լայն շրջանակին, երբ նրանք ձգտում են հասնել ազգային քաղաքականության նպատակներին: Այն ենթադրում է մրցակցային ազդեցությունների և պահանջների հավասարակշռում երկրի երկարաժամկետ շահի համար:

հարցում, ինչպիսիք են վերականգնմանը և կայունացմանը նպաստող քաղաքականությունները, որոնք խթանում են մրցակցությունը, առևտուրն ու ներդրումները: Դրանով ՀՀ Կառավարությունը կխուսափի ընդհանուր վտանգներից (օրինակ՝ քաղաքականության գրավումից) և Հայաստանը փխրուն տնտեսությունից կվերածի թափանցիկ, ներառական և պատասխանատու համակարգերի վրա հիմնված տնտեսության:

Վերջապես, ՄԱ 2.1-ը կօգնի հասանելի դարձնել կապիտալը արդյունավետ ներդրումների համար: Ներառական աճի ախտորոշման (ՆԱԱ) և ԶՖԿ շուկայի գնահատման տվյալները ցույց տվեցին, որ չնայած առկա է կապիտալ, այն արդյունավետորեն չի օգտագործվում և միայն նվազագույն չափով է նպաստում Հայաստանի տնտեսության աճին (այսինքն՝ սպառողական և անշարժ գույքի վարկավորումը): Չհաշված COVID-19- ի ազդեցությունը, 2009 թվականից ի վեր օտարերկրյա ներդրումների զուտ ներհոսքի անկում է գրանցվել՝ 2019 թ. հասնելով ՀՆԱ-ի 1,9 տոկոսին: Խնդիրը էլ ավելի բարդացնելով, ցածր պետական ներդրումները և հարկաբյուջետային համախմբումը, հավանաբար, հետագայում կճնշեն մասնավոր հատվածի գործունեությունը: Այդ խնդրի լուծման համար ԱՄՆ ՄԶԳ-ն կաջակցի արդյունավետ ներդրումների համար կապիտալ տրամադրելու ջանքերին, օգտագործելով այն մոտեցումները, որոնք կարող են ներառել խառը ֆինանսներ, աջակցություն գործարքների կայացմանը և ԴՖԿ-ի և ԱՄՆ ՄԶԳ-ի/ Վաշինգտոնի միջոցով մեխանիզմների հասանելիությանը: ԱՄՆ ՄԶԳ-ն խթանիչ դերակատարում կունենա կապիտալը հասանելի դարձնելու գործում՝ ավելացնելով ներդրումները էներգետիկայի, ջրի, գյուղատնտեսության և զբոսաշրջության ոլորտներում: Բացի ՓՄՁ-ներին տրամադրվող աջակցությունը շարունակելուց, ԱՄՆ ՄԶԳ-ն կփորձի աջակցել նաև ավելի մեծ ներդրումների, որոնք առաջացնում են պաշտոնական զբաղվածությունը և ապահովում են տնտեսական դիվերսիֆիկացում: Դա կհանգեցնի արդյունավետ օգտագործմանն ուղղված ավելի մեծ կապիտալի առաջացմանը, որը կուղղվի 1) արտադրության, ծառայությունների և գիտելիքի տնտեսության մեջ ներդրումային կայուն քաղաքականության ձևավորմանը և 2) ցուցադրական էֆեկտների օգտագործմանը՝ ֆինանսական հատվածին համոզելու համար առաջարկել ավելի ցածր արժեք ունեցող կապիտալ, որը գրավիչ է ներդրողների համար:

Միջանկյալ արդյունք 2.2. Թիրախային ոլորտների մրցունակության ավելացում
Ինչպե՞ս է ՄԱ 2.2-ը նպաստում է ԶՆ- ին.

ԵԹԵ արտահանման շուկաները դիվերսիֆիկացվեն, նպատակային հատվածների արտահանումը կատարելագործվի, իսկ մարդկային կապիտալի կարողությունները բարելավվեն շուկայի կարիքների բավարարման նպատակ, ԱՊԱ նպատակային հատվածների մրցունակությունը կավելանա, քանի որ դրանք ավելի եկամտաբեր և դիմակայուն կդառնան:

ՄԱ 2.2- ի միջոցով ԱՄՆ ՄԶԳ-ն կբարելավի արտահանման շուկայի դիվերսիֆիկացումը, կբարձրացնի արտահանման կատարելագործումը և կօգնի օպտիմալացնել ռազմավարական ոլորտները, հիմնվելով այն ոլորտների վրա, որտեղ արդեն առկա է Հայաստանի տնտեսության կառուցվածք, ինչպիսիք են գյուղատնտեսությունը (ներառյալ այգեգործությունը, անասնաբուծությունը և կաթնամթերքի վերամշակումը), զբոսաշրջությունը և բարձր տեխնոլոգիաները: Այս ոլորտներին շարունակական աջակցության տրամադրումը

հատկապես կարևոր է COVID-19- ի տեսանկյունից, քանի որ դրանք շատ առումներով փաստացի անվտանգության ցանց են կազմում կառավարության հասունացման և անվտանգության ցանցի պաշտոնական ծրագրերի մշակման հետ զուգահեռ: Այս հատվածներին ժամանակավոր աջակցության տրամադրումը կօգնի երկրին աճել և բարելավել արտադրանքի / ծառայությունների որակը և մրցունակությունը: ՄԱ 2.2- ը նաև աշխատուժի զարգացման միջոցով կանդրադառնա մարդկային կապիտալի թերություններին՝ կենտրոնանալով կանանց և երիտասարդների համար արժեքավոր զբաղվածություն ապահովելու ուղղությամբ: Այս ՄԱ- ի ներքո իրականացվող գործողությունները կխթան ՄԱ 2.1-ով նախատեսված տնտեսական կառավարման ավելի լայն ջանքերը:

J2SR տվյալների համաձայն, զբոսաշրջությունը, գյուղատնտեսությունը և բարձր տեխնոլոգիաները տնտեսական աճի երեք խոստումնալից և նպատակային ոլորտներն են: Չնայած COVID-19- ը խարխլել է զբոսաշրջության աճի դրական միտումը, ոլորտը կարևոր նշանակություն ունի Հայաստանի հետագա աճի հետագծի համար և նոր մոտեցումներ է պահանջելու իր վերջնական վերականգնման համար: [20] ԱՄՆ ՄԶԳ-ն նաև բարձր տեխնոլոգիական հատվածին աջակցության հնարավորություններ է տեսնում՝ հաշվի առնելով դրա արագ աճի պատմական միտումը և COVID-19- ի ազդեցությունների նկատմամբ ակնհայտ դիմացկունությունը: Նմանապես, գյուղատնտեսության ոլորտը համեմատաբար չի տուժել COVID-19- ից՝ ապահովելով Հայաստանում բնակչության ավելի քան 30 տոկոսի զբաղվածությունը: ՄԱ 2.2- ի միջոցով ԱՄՆ ՄԶԳ-ն կաջակցի կառավարության կողմից արտահանման վրա հիմնված ռազմավարությանը և կբարձրացնի առավելագույն ներուժ ունեցող հատվածների մրցունակությունը՝ բարելավելով արտահանման շուկայի դիվերսիֆիկացումը՝ ինչպես ներմուծման երկրների թվի, այնպես էլ ապրանքների և ծառայությունների քանակի առումով: Սա կներառի որակի և արտադրության ծավալի բարելավումներ `ապահովելու համար, որ Հայաստանի արտահանումը համապատասխանի համաշխարհային չափանիշներին, ինչպես նաև կարողությունների զարգացում՝ հայկական բիզնեսը դեպի նոր շուկաներ կողմնորոշելու համար:

ՄԱ 2.2- ը կբարձրացնի արտահանման կատարեգարծումը՝ աջակցելով ցածրից դեպի բարձ արժեք ունեցող բարձրարժեք ապրանքների և ծառայությունների անցմանը: Harvard Growth Lab– ի Տնտեսական բարդության ատլասը պարզեց, որ «նախորդ տասնամյակի համեմատությամբ, Հայաստանի տնտեսությունը դարձել է պակաս բարդ՝ 32 կետով վատթարացնելով դիրքերը ECI վարկանիշում: Հայաստանի վատթարացող բարդությունը պայմանավորված է արտահանման դիվերսիֆիկացիայի բացակայությամբ»: Այս ՄԱ-ի ներքո իրականացվող միջամտությունները ապացուցողական կլինեն և կկենտրոնանան 1) բարձր

[20] Ուղևորությունների և զբոսաշրջության համաշխարհային խորհուրդը գնահատել է ԵԵ տասնյոթ երկրների ուղևորություններից և զբոսաշրջությունից անուղղակի եկամտի և զբաղվածության հետևանքները և գտել, որ Հայաստանում զբոսաշրջությունը ունի տասնյոթ երկրների ամենաբարձր բազմապատկիչ ազդեցություններից մեկը: Աղբյուր. Զբոսաշրջության ծրագրերի և զարգացման արժեքը Արևելյան Եվրոպայում և Եվրասիայում տնտեսական աճի խթանման համար, ԱՄՆ ՄԶԳ ԵԵ / MCP, 2019 թվականի հուլիս:

տեխնոլոգիաների ոլորտում տարատեսակ հնարավորությունների շարքի, 2) գյուղատնտեսությանն, հատկապես այգեգործության՝ հատուկ բարենպաստ շուկայական դիրք և (կամ) ցածր քաշ ունեցող բարձրարժեք արտադրանքի, 3) զբոսաշրջության ուղղությամբ, որտեղ ապրանքների դիվերսիֆիկացումը այցելուների գրավելու բանալին է և ունի ավելի մեծ տնտեսական բազմապատկիչ ազդեցություն:

Ներքին և արտաքին գնահատումները հաստատել են մարդկային կապիտալի զգալի խոչընդոտները տարբեր ոլորտներում, Հայաստանի ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածներում: [21] Դրանք են աշխատաշուկայի խզվածքները, որոնք մասամբ պայմանավորված են կրթության ծախսերի ցածր մակարդակով (ՀՆԱ-ի ընդամենը 2.7 տոկոսը՝ աշխարհում միջին 4.1 տոկոսի համեմատությամբ), աշխատաշուկայում կանանց և երիտասարդների մասնակցության ցածր մակարդակով և հմտությունների անհամապատասխանության մեծ տարածվածությամբ: [22] Հայաստանում աշխատուժի առաջարկի և պահանջարկի անհավասարակշռության շտկումը անհրաժեշտ է՝ միաժամանակ հաշվի առնելով մայրաքաղաքի և մարզերի միջև տեղաշարժի, տեղահանման և թրաֆիքինգի խնդիրները: ՄԱ 2.2- ը կանդրադառնա այս մարտահրավերներին՝ աջակցելով մրցունակ աշխատուժի զարգացմանը՝ շուկայի ներկա և ապագա պահանջարկը բավարարելու նպատակով: Միջամտությունները կարող են ներառել ինչպես կարճաժամկետ, այնպես էլ ավելի երկարաժամկետ ծրագրեր՝ աշխատուժի զարգացման ներդրումների շուկայի կարիքներով պայմանավորված լինելը ապահովելու նպատակով:

Միջանկյալ արդյունք 2.3. Բնական ռեսուրսների կայուն կառավարման բարելավում
Ինչպե՞ս է ՄԱ 2.3-ը նպաստում է ՋՆ- ին.

ԵԹԵ ավելանա էներգիայի այլընտրանքային աղբյուրներից ներքին էներգիայի արտադրության քանակը և տարածաշրջանային էներգետիկ շուկաների ինտեգրումը, և բարելավվի ջրային ռեսուրսների հասանելիությունն ու կառավարումը, ԱՊԱ Հայաստանի բնական ռեսուրսները ավելի կայուն կկառավարվեն և կդիդերսիֆիկացվի նրա էներգամատակարարումը:

ՄԱ 2.3- ի միջոցով ԱՄՆ ՄԶԳ-ն կբարձրացնի էներգիայի և ջրի անվտանգությունը՝ բարելավելով բնական ռեսուրսների կայուն կառավարումը և խթանելով

[21] «Մարդկային կապիտալը… կարող է դառնալ պարտավորեցնող խոչընդոտ, եթե ներդրումներ չկատարվեն կրթական և աշխատուժի վերապատրաստման համակարգերում, մասնավորապես՝ հաշվի առնելով երիտասարդների համար գործնական փորձ ձեռք բերելու սահմանափակ հնարավորությունները, կանանց աշխատուժի չափավոր մասնակցության տոկոսը և բնակչության թվաքանակը: Աղբյուրը՝ Հայաստանի ներառական աճի դիագնոստիկա ԱՄՆ ՄԶԳ, սեպտեմբեր 2019:

[22] Ներկայումս Հայաստանում երիտասարդների 42 տոկոսը չի աշխատում այն մասնագիտությամբ, որի համար վերապատրաստվել կամ կրթվել է: Աղբյուրը՝ Armenia Country Study, Friedrich-Ebert-Stiftung, 2016.

էներգամատակարարման դիվերսիֆիկացումը: Էներգետիկայի և ջրային ռեսուրսների պատշաճ կառավարումը ազդեցություն ունի ունի ինչպես բիզնեսի, այնպես էլ քաղաքացիների առողջության և կյանքի որակի վրա: Կենսունակ, հուսալի և մատչելի էներգիայի արտադրությունը և էլեկտրաէներգիայի ազատականացված շուկան կարևոր նշանակություն ունեն Հայաստանի անվտանգության և կայունության համար: ԱՄՆ ՄԶԳ-ն կկենտրոնանա էներգիայի արտադրությունը դիվերսիֆիկացնելու ջանքերի շուրջ՝ մատակարարման դիվերսիֆիկացման և տեխնոլոգիապես չեզոք էներգիայի արտադրության տարբերակների (ներառյալ վերականգնվող էներգիայի), էներգախնայողության միջոցառումների, էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացման և Վրաստանի հետ էլեկտրաէներգիայի շուկաների տարածաշրջանային ինտեգրման միջոցով: Սա ներառում է Հայաստանի ազգային էներգետիկ ռազմավարության և գործողությունների ծրագրի ձևավորումը և աջակցությանն ցուցաբերումը, իրավական և կարգավորիչ միջավայրի բարելավումը և ԱՄՆ էներգետիկ ընկերությունների հետ գործընկերության հնարավորությունների որոնումը: Կախվածությունը արտաքին աղբյուրներից և արևմտյան մոտեցումներին չհամապատասխանելը, էլեկտրաէներգիայի թափանցիկ շուկայի բացակայությունը խոչընդոտում է մրցակցությանը և Հայաստանին խոցելի է դարձնում էներգետիկայի շուկաներում գների և մատակարարման տատանումների հանդեպ: ԱՄՆ ՄԶԳ-ն նաև կօժանդակի թափանցիկ իրավական և կարգավորիչ մոտեցումների ընդունմանը և իրականացմանը, որոնք արևմտյան ստանդարտներին միջոցով համապատասխանեցվում են ՀՀ Կառավարության ռազմավարական պլանավորման փաստաթղթերին և էներգետիկային առնչվող միջոցառումներին:

Ջրային ռեսուրսների արագ սպառումը առանցքային խոչընդոտ է Հայաստանի տնտեսական զարգացման համար, քանի որ այն գյուղատնտեսության, արդյունաբերության և ծառայությունների ոլորտների, ինչպես նաև էներգետիկայի և սննդի անվտանգության համար երկարաժամկետ հետևանքներ ունի: Ջրի սպառման հետ կապված հարցերը նաև ազդում են օտարերկրյա ներդրումներ ներգրավելու՝ կառավարության կարողության վրա: Սրան անդրադառնալու նպատակով ԱՄՆ ՄԶԳ-ն կխթանի ջրային ռեսուրսների կայուն կառավարումը և կբարելավի ջրի հասանելիությունը: Սա ներառում է առկա ջանքերի ընդլայնում՝ Արարատյան դաշտի սահմաններից դուրս որը ՀՀ Կառավարության հստակ խնդրանքն է հանդիսացել 2019 թ. մայիսին ԱՄՆ-Հայաստան ռազմավարական երկխոսության կառավարության հետ և հետագա բարձր մակարդակի խորհրդակցությունների ընթացքում:

V. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ և ՈՒՍՈՒՑՈՒՄ

ԱՄՆ ՄԶԳ-ն կամրապնդի Մշտադիտարկման, Գնահատման և Ուսուցման (ՄԳՈՒ) մշակույթը և կինստիտուցիոնալացնի Համագործակցությանն, ՈՒսուցման և Հարմարվողականության (ՀՈՒՀ) շրջանակը: Ստորև մանրամասն ներկայացված Առաքելության ռազմավարական ՄԳՈՒ մոտեցումը հետագայում կմշակվի Կատարողականի կառավարման պլանում (ԿԿՊ): ԱՄՆ ՄԶԳ-ն մտադիր է ինչպես ԵԶՀՌ- ը, այնպես էլ ԿԿՊ- ն պահպանել որպես կենդանի փաստաթղթեր, որոնք կօգտագործվեն հաջորդ հինգ տարիների համար ռազմավարական պլանավորումը շարունակաբար հիմնավորելու և վերահսկելու համար:

Մշտադիտարկում. ԱՄՆ ՄԶԳ-ն կմշտադիտարկի ԵԶՀՌ իրականացումը ինչպես ռազմավարական, այնպես էլ ծրագրային մակարդակում: Ռազմավարական առումով, առաքելությունը կիրականացնի ռազմավարության մակարդակի ծրագրեի տարեկան վերանայումներ, միջանկյալ քննադատական վերլուծության միջոցառում և կմշտադիտարկի վերհանված սցենարի ազդանշանները՝ պարզելու, թե արդյոք ԶՆ-ի և ՄԱ- ի մակարդակի նպատակները իրականացված են, թե անհրաժեշտ են ճշգրտումներ: Ծրագրային մակարդակում, Առաքելությունը կկիրառի բազմաբնույթ գործիքներ՝ գործունեության մոնիտորինգի համար, ներառյալ ծրագրերի դաշտային ուսումնասիրությունները, միջոցառման մակարդակի եռամսյակային մշտադիտարկման այցելությունները և ծրագրերի տեղանքների այցելությունները: ԱՄՆ ՄԶԳ-ն կմասնակցի ինչպես կատարողականի, այնպես էլ համատեքստի մշտադիտարկմանը, կատարողականի ցուցանիշի տվյալների և որակական ու քանակական տեղեկատվության համակարգված հավաքագրմանը, ինչը կօգնի պարզել, թե արդյոք ակնկալվող արդյունքները կիրականացվեն սահմանված ժամկետներում, իրականացումը ընթացքի մեջ է, նոր մոտեցումները նոր մղում և ժողովրդականություն են հավաքում, և արդյոք կան որևէ արտաքին գործոններ, որոնք կարող են ազդել իրականացման վրա: Այս նպատակով ԱՄՆ ՄԶԳ-ն տեղական գործընկերների և փորձագետների հետ համատեղ կաշխատի մշտադիտարկման միջոցառումների իրականացման ուղղությամբ, ինչը կներառի տեղական հարցումների գործակալությունների, Ազգային վիճակագրական ծառայության և սոցիալական հետազոտական կազմակերպությունների և վերլուծական կենտրոնների տվյալների ինտեգրումը կատարողականի կառավարման գործընթացում: Առաքելությունը նաև կապահովի, որ նոր գործընկերներին տրամադրվեն ՄԳՈՒ կարողությունների զարգացում և տեխնիկական աջակցություն: ԱՄՆ ՄԶԳ-ն նաև ներառելու է կատարողականի ցուցանիշները՝ ՄԹՊ- ի ուղղությամբ առաջընթացի մշտադիտարկման համար ըստ երկու ԶՆ-երի համապատասխան կատարման մեխանիզմների և Առաքելության անձնակազմին և բոլոր իրականացնող գործընկերներին ՄԹՊ իրազեկման և երեխաների պաշտպանության դասընթացներ:

Այնուհետև ԱՄՆ ՄԶԳ-ն կբարելավի երկրում փոփոխվող համատեքստի հարմարվելու՝ աշխատակիցների կարողությունները, հատկապես հաշվի առնելով COVID-19-ի անմիջական և հավանական երկարաժամկետ հետևանքները: Առաքելությունը դիտարկում է տվյալների որակի վիրտուալ գնահատման (ՏՈԳ) պիլոտային միջոցառումներ և GIS- ի և աշխարհագրական հաշվետվությունների տվյալների ինտեգրում մշտադիտարկման գործողություններում:

Գնահատում: Հաշվետվողականությունը և ԱՄՆ ՄԶԳ ծրագրերի միջոցով Հայաստանի J2SR-ի առաջխաղացումը ապահովելու նպատակով Առաքելությունը նոր ռազմավարության իրականացման ընթացում կկատարի բազմաթիվ գնահատումներ, ներառյալ առնվազն մեկ ծրագրի ամբողջական գնահատում՝ համաձայն ՀԱՀ 201-ի պահանջի: Նոր նորարարական մոտեցումների պատճառահետևանքային կապերի ընկալման և գործակալության ուսուցմանը նպաստելու համար՝ ընդարձակելով արդյունավետ տեխնիկական մոտեցումների վերաբերյալ գիտելիքների պաշարը, ԱՄՆ ՄԶԳ-ն կդիտարկի արտաքին ազդեցության գնահատման իրագործելիությունը պիլոտային մի շարք նոր մոտեցումների մասով: Առաքելությունը հանձն է առնում է գնահատումներից քաղած դասերը ներառել ռազմավարական պլանավորման և

նախագծերի ձևավորման մեջ և կպահպանի տարեկան ծրագրային ֆինանսական միջոցների երեք տոկոսի նպատակային ցուցանիշը գնահատման իրականացման համար: ԱՄՆ ՄԶԳ-ն նաև կապահովի արդյունքների լայն տարածում՝ ուսուցումը առավելագույնի հասցնելու և Զարգացման փորձի տեղեկատվական կենտրոն զեկույցներ ներկայացնելու համար: Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ուսուցման գաղափարական հարցեր, որոնք հետագայում կմշակվեն ԿՄԿ- ում և հիմք կհանդիսանան ապագա գնահատման նախագծման համար:

ԶՆ 1: Ժողովրդավարական անցման խթանում	1. Արդյո՞ք ԱՄՆ ՄԶԳ-ի մոտեցումները՝ ուղղված հաշվետվողականության ամրապնդմանը և քաղաքացիների ներգրավվածության ավելացմանը, արդյունավետորեն առաջ են մղել Հայաստանի ժողովրդավարական ձեռքբերումների համախմբումը: Ինչո՞ւ կամ ինչո՞ւ ոչ: Դրանք որևէ ազդեցություն ունեցե՞լ են ներառականության վրա: 2. Որքանո՞վ են այս ԶՆ-ի ներքո իրականացվող գործողությունները հավաքականորեն նպաստել Հայաստանում ժողովրդավարական անցման և համախմբման առաջխաղացմանը:
ԶՆ 2: Տնտեսական անվտանգության բարելավում	1. Արդյո՞ք ԱՄՆ ՄԶԳ-ի մոտեցումները `ուղղված տնտեսական գործունեության միջավայրի բարելավմանը, ոլորտի մրցունակության բարձրացմանը և բնական ռեսուրսների կառավարման բարելավմանը, հանգեցրել են տնտեսական անվտանգության և աճի: 2. Արդյո՞ք ԱՄՆ ՄԶԳ մասնավոր հատվածի ներգրավվածության մոդելները հանգեցրել են Հայաստանում կայուն աճի: 3. Որքանո՞վ են այս ԶՆ-ի ներքո իրականացվող գործողությունները հավաքականորեն նպաստել Հայաստանում տնտեսական անվտանգության առաջխաղացմանը:

Համագործակցություն, ուսուցում և հարմարվողականություն. ԱՄՆ ՄԶԳ-ն կինստիտուցիոնալացնի Համագործակցության, ուսուցման և հարմարվողականության (ՀՈՒՀ) շրջանակը ծրագրի շրջափուլի բոլոր մակարդակներում և կապահովի ՀՈՒՀ- ի համար նպաստավոր պայմանների կատարումը: Սա ներառում է Առաքելությունում ՀՈՒՀ կոնտակտային անձի նշանակում, առաքելության ամբողջ ՀՈՒՀ հասունության գործիքակազմի գնահատում և ՀՈՒՀ-ի հետ կապված ամենամսյա միջոցառումների իրականացում (օրինակ `դադար վերցնելու և դիտարկելու պահեր, գործակալության ՄԳՈՒ ուղեցույցի թարմացումներ) ԱՄՆ ՄԶԳ Կովկասի գրասենյակների լավագույն փորձի փոխանակում): ԱՄՆ ՄԶԳ-ն նաև կվերանայի իր ներկայիս նախագծերի և միջոցառումների ձևավորման գործընթացները՝ ապահովելու համար, որ իրագործող գործընկերները ամբողջությամբ ինտեգրեն ՀՈՒՀ գործելակերպերը իրագործման մեջ (օրինակ՝ գործողություններից հետո պարբերական վերանայում, տարեկան աշխատանքային պլանավորում, եռամսյակային հաշվետվություն):

Որոշումների կայացման հիմնավորման համար ուսուցումի և ապացույցների կիրառման համար կօգտագործվեն հարմարվողական կառավարման ռազմավարություններ: Մշտադիտարկման տվյալների և գնահատման արդյունքների, ինչպես նաև հետազոտությունների և գնահատումների հիման վրա ԱՄՆ ՄԶԳ-ն կավելացնի կամ կդադարեցնի որոշակի մոտեցումների կամ գործընթացների օգտագործումը և կվերակազմակերպի իր աշխատակազմի ձևավորման օրինաչափություններն ու կառավարման փորձը: Գիտելիքի կառավարումը սրա կարևոր բաղադրիչն է: Առաքելությունն ապահովելու է, որ անձնակազմի՝ պաշտոններից անցում կատարելու ժամանակ առկա լինի համակարգված և մտածված գործընթաց կլինի՝ հմտությունների և գիտելիքների փոխանցումը կառավարելու համար՝ կայուն կազմակերպական վերջնարդյունքների ապահովման նպատակով:

VI. ՀԱՎԵԼՎԱԾ. ՃԱՆԱՊԱՐՀ ԴԵՊԻ ԻՆՔՆԱՊԱՀՈՎՈՒՄ. ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ